№ 220 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 220

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի:
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—30 կ., IV երեսի վրա—10 կոպէկ:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մկրտիչ-աղա Աջնաուրեանը իր ընտանիքով հանդերձ՝ յայտնում է իր խորին շնորհակալութիւնը ազգականներին, ծանօթներին և բոլոր այն հիմնարկութիւններին ու ընկերութիւններին, որոնք թէ իրանց ներկայութեամբ և թէ նամակներով, հեռագիրներով ու նուիրաբերութիւններով (պսակի փոխարէն) յարգեցին իր որդու՝

ՍՏԵՓԱՆ ԱՋՆԱՒՈՒՐԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԸ:

711. 1—1

Պատերազմից Վնասվածներին Օգնող Կովկասեան Գլխաւոր Կոմիտէտը

սրանով յայտարարում է, որ Թիֆլիսի Քաղաքային Աշխատանքի Բորսայում բացված է առանձին Բաժանմունք, որ պիտի հայթայթէ փախստականներին որևէ աշխատանք: Բաժանմունքը աշխատանք կը հայթայթէ հետևեալներին. հաշուապահներին, գրասենեկապետներին, գանձապահուհիներին, ուսուցչուհիներին, գործակատարներին, դռնապաններին, ստորոժներին, ռէմինգտոնիստներին, գործակատարուհիներին, սպասաւորներին, շվէյցարներին, խոհարարներին, բանուորներին, մեխանիկներին, դայեակներին, աղախիններին, խոհարարուհիներին, լուացարարուհիներին, ծառաներին:

Այն փախստականները, որոնք աշխատանք են որոնում, և այն անձերը, որոնք որևէ աշխատանք կարող են տալ նրանց, պէտք է դիմեն և այդ մասին յայտնեն Բաժանմունքի տնօրէն Շ. Ա. Դաւիդովային (Биржа труда, Верійскій спускъ): Թէ աշխատանք որոնելու և թէ ընձեռելու յայտարարութիւնները, նոյնպէս և այլ և այլ տեղեկութիւններ տալը կատարվում են ձրիաբար:

տա. (օ. մ.) 697. 3—3

ՏԱՃԿԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է հայ հասարակութեան, որ Կրծանիսում, Միրանաւոր վանքի գաւթում ապաստանած 150—170 որբերի խնամակալութիւնը սեպտ. 15-ից վերցրել է իր վրա՝ հոգալով նոցա առօրեայ ծախքերն և մտածում է նրանց դաստիարակութեան մասին:

Միութիւնը յայտնելով այս մասին, կոչ է անում բոլոր նրանց, որոնց սրտին մօտ է աւերեալ հայրենիքից փախած դժբաղդ որբերի կեանքի գոյութեան ապահովութիւնը, թող բարեհաճեն իրանց լուման, ինչ չափով էլ լինի նա, նուիրաբերել այդ տարաբաղդ որբերին մնուցանելու և ազգային ոգով դաստիարակելու համար:

Նուիրատւութիւններ թէ դրամով և թէ զանազան իրերով՝ խնդրվում է ուղղել հետևեալ հասցէներին.

1) Միութեան նախագահ Արշակ Սաֆարեանին, Купеческій банкъ.
2) Միութեան անդամ-գանձապահ Յակոբ Տէր-Յարութիւնեանին, Кафе «Централь» (Эрив. площадь).
3) Միրանաւորի գաւթում կառավարչին:

Հայրենակցական Միութիւն

(օ. մ.) տա. 658. 10—8

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(Զուբալովի անուան)

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ
Խմբակցութիւնը
Այսօր, չորեքշաբթի,
Հոկտեմբերի 7-ին
կը ներկայացնէ

ԱՅԼԱՆԴԱԿՆԵՐ

Դրամա 4 գործ. Շիուկաշվիլիի, Թարգմ. Ա. Սամբուլեանի և Մ. ք. Տէր-Մկրտչեանի

Մասնակցում են.—տ. տ. Ազնիւ, Պալեան, Յասմիկ, օր. Վանեցեան, պ. պ. Աղաբաբեան, Գաւրօշ, Եանիկեան, Մարութեան, Ռուսեան, Սերժ, Օհանեան:

Սկիզբն է երեկ. ժ. 8-ին:
Տեղերի գները 4—50 կոպէկ:
Ռեժիսոր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝
ՍՏ. ԳԱԼՍՏԵԱՆ և Ա. ԷԼԻԶԲԱՐԵԱՆ

տա. 710. 1—1

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕՏՕՐԱԿՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օր. 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան: ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ տա. ժ. 9—10 ՁՐԻ: Бебутовская, 23. тел. 7—29.

տա. (ա. օ.) 504. 100—55

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, փարփորից և այլն: Ատամի հեռացումը առանց ցաւի: Արհեստական ատամներ ոսկուց (առանց բիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով:

Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից:

(ա. օ.) տա. 515. 100—44

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչևսկայա 13, տէլէֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանանց և թէ ծերերին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն стаціонаръ հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով: Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամեն օր՝ ժ. 1—12 առ.:

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժևսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

(չ. ու. կ.) տա 970. 100—96

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐԻ
հետեւեալ հրատարակութիւնները.

1) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1906 թ. համարը, յօգուտ կովկասահայ արկածեալների . 4 ր.
2) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1909 թ. համարը, յօգուտ Ադանայի արհաւիրքներին ենթակայ հայերի . . . . 4 ր.
3) «ՀԱՅԻ ԿՏՈՐ ԶԷԹՈՒՆՑՈՒՆ», յօգուտ Զէյթունի հայ սովեալների 2 ր.
4) «ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ», բժշկ. Գ. Բաբեանի I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն . 1 ր.
5) «ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ», Պ. Ադամեանի 1 ր.
6) «ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ», Քամալեանց Ս.-ի . 50 կ.

Յիշեալ գրքերը Թիֆլիսում մեզանից գնողները կարող են իրանց իսկական գներով ձեռք բերել:

Թիֆլիսից դուրս պահանջողների հաշւին է ճանապարհածախսը:

1. 0—6

ՍԽԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

«Баку» թերթը, խօսելով «Մշակի» առաջարկի մասին, թէ հայութեան գլխին աղէտ բերող մարմինները պէտք է ասպարէզից հեռանան և առաջ գան նոր ույժեր ու մարմիններ, որոնք աշխատեն փրկել հայութեան մնացորդները, և թէ դրա համար հարկաւոր է գումարել Ամենայն Հայոց Կաթողիկոսի [illegible] ներքոյ ազգային ժողով, իր կողմից հետևեալն է գրում.

«Մենք պէտք է նկատենք, որ հայ ժողովրդի ներկայացուցիչների խորհրդակցութեան գումարումը ժողովրդի հոգևոր պետի նախագահութեամբ հանդիսանում է ամեն պայմաններում և՛ ցանկալի և՛ օգտակար: Հայ ժողովրդի վերապրած տրագիկական բոպէի համար այդպիսի խորհրդակցութիւնը ամեն կերպ անհրաժեշտ է:

«Բայց մենք բնաւ չենք կարող համաձայնել, որ առաջարկված խորհրդակցութեան մէջ մասնակցելու կոչվող և լիազօրվող անձինք լինեն ոչ ընտրված ձեռնհաս ժողովների կողմից: Այդպէս դրանք ինչպէս կը լինեն «ժողովրդի ներկայացուցիչներ», եթէ ինքը ժողովուրդը չէ ընտրել նրանց:

«Իսկական ազգային ներկայացուցչութիւն կազմակերպելու հարցը աւելի բարդ է և դժուար, քան այդ թւում է առաջին հայեացքից: Եւ գուցէ հէնց դրա մէջ է կայանում հայ ժողովրդի տրագեդիան, որ իր պատմական գոյութեան ամենածանր բոպէին, հայ ժողովուրդը, անկազմակերպ և պառակտված զանազան հոսանքներով, երբեմն բոլորովին տարբերային, չունի մի այնպիսի ազգային կազմակերպութիւն, որ կարող լինէր գիտակցել և գնահատել ժողովրդի դրութիւնը և ձեռնհաս՝ վարել այս և այն պատասխանատու ազգային քաղաքականութիւնը»:

Այո, շատ ճիշդ է, որ հայ ազգի տրագիզմը կայանում է նրա մէջ, որ նա չունի մի ձեռնհաս, ըստ ամենայնի կարող ազգային կազմակերպութիւն և գործերը գտնվում են ապիկար մարդկանց ձեռքում, որոնք առաջնորդեցին ազգը իրանց տխմար քաղաքականութեամբ դէպի կործանում: Հէնց սկզբից «Մշակը» նախազգուշացրեց, բայց նրա ձայնը անլսելի մնաց:

Ինչ վերաբերում է «Баку» թերթի առարկութեան, ժողովի գումարման մանրամասն եղանակի մասին, նա շատ սխալվում է՝ կարծելով որ մենք իբր թէ յանձնարարում ենք գումարել ժողով ոչ ընտրեալներից: Այդպիսի միտք մենք չենք արտայայտել: Մենք միայն ասել ենք, որ ներկայացուցիչների ընտրութեան եղանակը պէտք է թողնել Ամենայն Հայոց Կաթողիկոսին. ինչպէս ընդունում է և ինքը «Баку» թերթը, իսկական ազգային ներկայացուցչութիւն կազմակերպելը և շատ դժուարին և շատ բարդ հարց է: Եթէ մենք դժգոհ ենք և միանգամայն չենք ընդունում ընտրութեան այն ձևը, որ մինչև այսօր գործադրվել է, որի դէմ մենք բողոքել ենք և որով ընտրված մարմինը չենք ճանաչել և ճանաչում օրինաւոր, մենք չէինք կարող յանձնարարել նոյնպիսի մի եղանակ: Մենք միայն այն ենք ասում, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եթէ նոյն իսկ իր հայեցողութեամբ և ընտրութեամբ հրաւիրէ զանազան խաւերի և հոսանքների ներկայացուցիչներ մասնակցելու խորհրդակցութեան, դա աւելի օրինական կը լինի, քան երբ հրաւիրում են այս և այն անձինք կամ խմբակցութիւններ:

Այս խնդրին դեռ կը դառնանք:

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական՝ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Հոկտեմբերի 3-ին կովկասեան ռազմաճակատի վրա ռազմական ընդհարումներ տեղի չունեցան:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՐԴԱՆԵԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 հոկտեմբերի

ՓԱՐԻԶ.— Դարդանէլում սեպտեմբերի երկրորդ կէսն անցաւ հանգիստ. Թիւրքերը փորձեցին մի քանի անգամ մօտենալ մեր խրամատներին, բայց մենք արգելք եղանք հակայարձակումներով: Թիւրքաց արտիլերեան զգալի գործունէութիւն ցոյց տուեց, բայց առանց առանձին հետևանքների մեր արտիլերիայի գերազանցութեան պատճառով:

Ամեն օր մեր օդագնացները աջողութեամբ ռումբեր են նետում թշնամու զօրաբանակների զանազան տեղերի վրա:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

«Times»-ը հաղորդում է, որ Թիւրքաց 20-րդ դիվիզիայի 7-րդ գունդը ապստամբվել է իր թիւրք և գերմանացի օֆիցերների դէմ:

ՇԷՐԻՖ-ՓԱՇԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Պարիզում հրատարակվող «Mecheroutiet» հանդէսի—թիւրքական ազատական տարրերի օրգանը—խմբագիր յայտնի Շէրիֆ-փաշան վերջերս մի նամակ է ուղղել «Journal de Genève»-ին: Այդ նամակում, ի միջի այլոց, կան հետևեալ հատուածները.

«Թոյլ տուէք ինձ ձեր թերթի սեպտ. 9-ի համարում լոյս տեսած «Մի ժողովրդի բնաջնջումը» պերճախօս յօդուածին աւելացնել իմ անձնական բողոքը «Մ. և Ա.» արիւնոտ կոմիտէի դէմ, որը 20-րդ դարում, վերանորոգելով իր տխուր շահատակութիւնները, որոնք ըստ երևոյթին պէտք է թաղված լինէին տգիտութեան ու բարբարոսութեան անցած դարերում, գերազանցեց Չինգիզխանի և Լէնկթիմուրի վայրագութիւններից:

«Եթէ կայ մի ցեղ, որ կապված է եղել Թիւրքերին իր հաւատարմութեամբ, երկրին մատուցած իր ծառայութիւններով, իր տաղանդաւոր քաղաքագէտներով ու պաշտօնեաներով, առևտրի, ինդուստրիայի, գիտութեան և արուեստների ամեն ճիւղում իր յայտնագործած ուշիմութեամբ, դա հայ ցեղն է:

«Հայերն են, որ Թիւրքիայում մտցրել են տպագրութիւնը, ինչպէս և թատրոնը: Հայ բանաստեղծները, գրագէտները, մեծ ֆինանսիստները և ուրիշ մեծ մարդիկը պատիւ կը բերէին արևմտեան որևէ երկրի, ինչպէս Մովսէս Խորենացին, պատմագէտ ու բանաստեղծ Արիստակէս Լաստիվերտցին, որին համեմատում են Երեմիայի հետ. և ժամանակակիցները՝ Րաֆֆին, Սունդուկեանը, Շիրվանզադէն, Ահարոնեանը, Զօպանեանը, Նարպէյը և ուրիշ շատ շատերը: Հայ չէր Օտեանը, որ օսմանեան սահմանադրութեան հեղինակ Միդհատ-փաշայի աշխատակիցն էր: «Արևելքի Գարիբալդին» Եփրեմ-խանն էր, որ մեծ դեր հանդիսացաւ պարսկական յեղափոխութեան, որ նախապատրաստվեց մի ուրիշ հայի՝ Մալկոմ խանի կողմից: Եւ արդար լինելու համար ասենք, որ Թիւրքիայում, ինչպէս Պարսկաստանում, բռնապետական ռէժիմի ամենակատաղի հակառակորդներն եղել են հայերը, որոնք մեծ չափով սատարեցին սահմանադրական ռէժիմի հաստատմանը:

«Չը կայ մի ինտելիգենտ թիւրք, որ համակրելիք չը լինի այս դատողութիւններին, որ արտայայտում էր իմ հանգուցեալ բարեկամ Լինչը, անգլիական պարլամենտի պատգամաւորը:

«Հայերը առանձնապէս ընդունակ են միջնորդներ լինելու նոր քաղաքակրթութեան: Նրանք ընտելացած են մեր ամենաբարձր իդէալներին և իւրացնում են եւրոպական կուլտուրայի բոլոր նոր արտադրութիւնները այնպիսի անյագութեամբ ու կատարելութեամբ, որոնց ոչ մի այլ ցեղ ընդունակ չէ եղել հաւասարվելու:

«Արդ՝ մտածել, որ այսպէս լաւ օժտված մի ժողովուրդ, որ բարերար մի շաղախի դեր է կատարել օսմանեան կայսրութեան վերանորոգման համար, պատմութիւնից անհետանալու վրա է, և ոչ միայն սուրկացած, ինչպէս հրէաները ասորեստանցիների օրով, այլ բնաջնջված է, պէտք է արիւնոտէ ամենաանզգայ սրտերը: Ես, ձեր թերթի միջոցով, կուզենայի ուղղել՝ սպանվելով մեռնող այդ ցեղին՝ իմ ցասումը դահիճների դէմ և իմ անսահման կարեկցութիւնը զոհերի համար»:

ԴԻԱՐԲԷՔԻՐ ԵՒ ՍԵՒԵՐԷԿ

V

Տնտեսական վիճակ և հաղորդակցութիւն.—Տիգրանակերտի նահանգէն՝ բացի Մուսուլի սահմանակից մէկ երկու գիւղախմբերու հայութենէն, որոնք մեծ մասամբ իրենց լեզուն և հայկական բարքը մոռցած էին, նահանգին միւս բոլոր հայութիւնը այլևայլ միջոցներով յարաբերութեան մէջ էր քաղաքակրթեալ բարձր երկիրներու հետ: Բնական անզուսպ ըղձանք մը կը մղէր զիրենք երկրին բարիքներէն օգտուիլ, աշխատիլ, հասնիլ եւրոպացիներուն: Ով որ այդ կողմերը ուսումնասիրողի հայեացք մը պտտցուցած է՝ անմիջապէս այն համոզման եկած է, թէ իր երկրին թշնամի կառավարութիւնն ու դաժան կամեցողութիւնները եթէ թողէին, մեր վերև նկարագրած գաւառները շատ շուտով անբռնակելի ծաղկեալ վիճակի մը կը բարձրանային, շնորհիւ բոլոր ազգաբնակութեանց մէջ իմաստութիւն և գործի եռանդալից յառաջդիմի սկզբունքը տարածող հայութեան...

Սակայն Թիւրք կառավարութիւնը միշտ չկամեցաւ հայուն ու Հայաստանին բարգաւաճումը.... Անոր համար երկրին հարստութեան աղբիւրը եղող երկրագործութիւնն ու առևտուրը, արհեստներն ու ձեռնագործները միշտ պահպանեցան իրենց նահապետական սիստեմին մէջ, ինչ որ այլեւս արթնցող հայութիւնը պարտաւորեալ կը տանէր, և նորէն կրցածին չափ կարտադրէր՝ կապրէր կերպով մը՝ շնորհիւ Ամերիկայէն գործաւորութեամբ շահած դոլարներուն: Այդպիսով թէ հայը կապրէր և թէ ապրիլ կը սովրեցնէր զինք հալածող իր հարևան միւսիւլման ազգերուն:

Մենք բազմիցս լսած ենք՝ Ջերմուկ քաղաքին մէջ հաստատուող և Դիարբէքիր ու Միջերկրականի նաւահանգիստները մեծ վաճառականի վարկ ունեցող Հաջի Բոնդէզաղէներու բերնէն, թէ դեռ քանի մը տարիներ առաջ ամբողջ նահանգին մէջ միւսիւլման առևտրական չկար, միւսիւլմանները միայն ջորեպանութեամբ և շատ-շատ պարտիզպանութեամբ պարապիլ գիտէին: Հայերն էին, որ Թիւրքին կամ քիւրդ-պախան արարին ուսուցին յարաբերելու, խանութպան ըլլալու և վաճառական դառնալու ճամբաները: Այս կէտը կը խոստովանին այդ կողմի մեծաւոր Թիւրքերը, կը խոստովանին նաև, թէ ինչ որ ալ ըլլայ՝ ի հարկին չեն կրնար չկոտորել իրենց նոյնիսկ սիրած հայերը... «Էմր ալլահն, վէ փադիշահն դըր» (կամքը Աստուծոյն և Թագաւորինն է...). այսինքն ինչ որ սուլթանը կը հրամայէ՝ Աստուծոյ կամքն է, և պէտք է գործադրել զայն, հակառակը մեղք կըլլայ չարաչար:

Զարմանալի չէ որ վերջերս նոյն նահանգին քանի մը տեղերէն՝ հայ երիտասարդներ իրենց հետ Ամերիկա կը տանէին՝ հարևան իսլամ ազգաս երիտասարդներ (քիւրդեր և թիւրքեր). անոնց օգնելով, ճանապարհին փող հասցնելով Ամերիկա կը տանէին: Գիտնալով հանդերձ թէ անոնց հայրերը իրենց հայրերը սպանած են, և նոյն բարիքը տեսնելէ վերջն իսկ շատ մը թիւրք երիտասարդներ վերադառնալով իբրև հարուստ թիւրք նորէն սկսած են կեղեքել, սպաննել հայեր:

Ահա այսպէս էր հայոց ապրելակերպը Դիարբէքիրի նահանգին մէջ. գալով հաղորդակցութեան միջոցներուն, նահանգին մէջ մէկ խճուղի է որ կանցնի, այն է՝ Սամսոն—Խարբերդ և յետոյ Դիարբէքիր—Սևերէկ—Հալէպ երկարող գիծը: Ասկէ զատ շինուած ճամբայ բնաւ չկայ: Ամեն գիւղ ու քաղաք ջորիներու և ուղտերու միջոցաւ փոխադրութիւնները կը կատարուին, արտերու և այգիներու բերքը նոյնիսկ բեռներով կը կրուին, կենդանեաց պարզ սայլերուն գործածումը նոյնիսկ հազուադէպ է: Կովկասէն մինչև Երզրում 3—4 օրէն կերթացուի. իսկ Երզրումէն մինչև Դիարբէքիր քաղաքը 10 օրէն, անկէ մինչև Սևերէկ 2 օր և մինչև Հալէպի Իսքէնդէրունի նաւահանգիստը 9 օր կը տևէ։ Բաւ է՝ Կարսէն ճանապարհորդ մը շարունակ ձիու կամ ջորիի վրայ հեծնելով երթալը յանձն առնելով և անպայման պարտաւորեալ տեղ տեղ երբեմն երբեմն դադար առնելով 24 օրէն կրնայ Դիարբէքիրի վրայով Իսքէնդէրուն հասնիլ (Միջերկրական ծով)։

Փոխադրութիւններն ու հաղորդակցութիւնները այսքան դժուար ըլլալով հանդերձ՝ եթէ Թիֆլիսաբնակ անհատ մը Դիարբէքիր կամ շրջակայ նահանգային քաղաք մը՝ օրինակ՝ հայու մը տուն հիւրընկալուէր, պիտի տեսնէր, որ եւրոպական հագուստ կապուստը, տնական սարքուածքներն ու մօդաները Թիֆլիսէն աւելի այն տեղերը շատ գացած են։ Այնտեղն ալ հարևան ազգերը մեզ հայերս՝ մօդայի մոլիներ կը կոչեն։ Կըսեն նաև, թէ հայերս անօթի կը մնանք ու մօդայէն վար չենք մնար....։

Իսկ երբ դուք նոյն քաղաքներուն բազարն ելլէք, պիտի տեսնէք տարազներու, բարքերու, դիմագծերու այնքան այլազանութիւն մը, որ պիտի կարծէք, թէ շատ հեռաւոր երկիրներէն բերուած զանազան ազգերու ներկայացուցիչներն են անոնք։

Օրինակ՝ սևամորթ, բոկոտն և մերկ արաբը, ապարօշաւոր թխադէմ քիւրդը, ճերմակ երկար պարեգօտով շարգեանը, քօլօզաւոր և չափքեանաւոր զազան ու ասօրին. Ասոնց մէջ գեղջկական տարազով լեցուն մարմնով հայերը Ամերիկայէն վերադարձող, իրենց նորաձև համազգեստով մեր պարոններն ու պարոնուհիները, անոնցմէ քիչ մը հեռուն նորէն չեք հագուած սկնոցաւոր ու մազերնին բանաստեղծի պէս թողուցած դպրոցաւարտ հայ պատանիները։

Ապա հեռաւոր մայրաքաղաքներու մէջ աւարտած համալսարանականներ և կառավարական բարձրաստիճան պաշտօնեաներ ծանրօրէն ման կուգան, իսկ պարեգօտաւոր Թիւրքերն ու մեր գործունեայ տարիքոտ հարուստները ֆէսերնին մինչև ականջնին իջեցուցած՝ փողերու ընկղնկոցին հետն են, մօզերնին իսկ չեն անցուներ շուրջերնին անցած-դարձածը։ Ասոնք ամենը քով քովի կը քալէին ու կապրէին....։

Գաղթական

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ռիգայի շրջանի ռազմաճակատի վրա՝ Աա գետի մօտ, Միտավայից ներքև, հակառակորդի այն զօրամասերը, որոնք անցել էին գետը Հէրցօգսգօրֆի շրջակայքում, նորից վանվեցին միւս ափը։

Դվինսկի շրջանի զօրաճակատի վրա, երէկվայ մեր վանած յարձակումներից յետոյ, թշնամին ամբողջ օր պասսիվ էր մնում։ Միայն Պօշլինա գիւղի մօտ թշնամին փորձեց երկու անգամ վանել մեզ գրաւած տարածութեան խրամատներից, բայց երկու յարձակումն էլ մենք վանեցինք։ Թնդանօթաձգութիւնը շարունակվում է։

Դեմմէն և Դրիսվեատա լճերի միջև կռիւները չեն դադարում։ Գերմանացիք անհագին կորուստներով վանվեցին Նուրվիանցա գիւղից դէպի հիւսիս գտնւող խրամատներից. մենք ձեռք ձգեցինք գերիներ ու գնդակացիրներ։

Վերին Նէմանի մօտ մենք կռւով վերցրինք Շչէրսա գիւղը։ Պրիպեատայից դէպի հարաւ, միջին Ստիրի գետի շրջանում՝ մեր զօրքերը երէկ խոշոր աջողութիւն ունեցան։ Սօվէշչիցա գիւղը գրաւելիս մենք գերեցինք 13 օֆիցեր, որոնցից 2-ը գումարտակի հրամանատարներ են, և 500 զինւոր։ Մեր հեծելազնդերը յարձակում գործեցին հակառակորդի վրա Պօդչեբէվիցէի շրջանում՝ Ռաֆալօվկից դէպի արևմուտք։ Առ այժմ այստեղ գերել ենք 30 օֆիցեր և աւելի քան 1000 զինւոր ու վերցրել ենք գնդակացիրներ։ Կօզլինիչի գիւղը նոյնպէս մեր ձեռքումն է։ Շեշտակի հարուածով մեր զօրքերը գրաւեցին Նօվօսէլկա գիւղը՝ Զարտօրիյսկից վերև։ Հակառակորդի հակայարձակումները վանելուց յետոյ, մեր ձեռքն ընկան աւելի քան 800 գերի գերմանացի և աւստրիացի։ Հետևեալ օրվայ արշալոյսին մեր զօրքերը ներս խուժեցին Կուլիկօվիչի գիւղը՝ Նօվօսէլկի գիւղից վերև։ Գերել ենք մօտ 1000 զինւոր, ձեռք ենք ձգել շատ գնդակացիր։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 հոկտեմբերի

ՓԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութիւններ.

Արտուայում մենք երէկ երեկոյեան ոչնչացրինք թշնամու մի արգելախումբ Նէվիլ Սէն-Վաաստից դէպի հարաւ-արևելք և ամրացանք նրա մէջ, վանելով գիշերվայ ընթացքում երկու հակայարձակում։ Լիգօնի շրջանում ուժեղ թնդանօթաձգութիւն է։ Լօթարինգիայում յամառ կռիւների ժամանակ մենք գրաւեցինք 100 մէտր խրամատ Ռէլիօնից դէպի հիւսիս։

Լոյս հոկտ. 3-ի գիշերը մեր օդագնացները ռումբեր նետեցին թշնամու զօրամասերի վրա Մեզիէր, Ազուտանժ և Ավրիկուրէ կայարանի շրջանում։

Լօօսի մօտ, Բուաշանգուշից ոչ հեռու և Սուշէից դէպի արևելք կատաղի թնդանօթային կռիւներ են։ Մենք ամրացանք և ընդլայնեցինք մեր դիրքերը Ժիվանշիի մօտի անտառում։ Էն գետի մօտ կռիւ էր ձեռքի ռումբերով։ Շամպանիում ուժեղ արտիլէրիական կռիւ է, մանաւանդ Տագիւր շրջանում։ Լօթարինգիայում մենք եռանդով պատասխանում էինք թշնամու ռմբակոծութեան և մի քանի հրդեհներ առաջ բերինք գերմանական զօրագծերի մէջ Լէնտրվի, Ամէնօնկուրի և Գօնդրէկսօնի մօտ։ Գերմանացիների շեշտակի հակայարձակումները Ռէլիօնի մօտ մենք կանգնեցրինք մեր կրակով։

Ի տրիտուր գերմանացիների, մեր աէրօպլանները ևս 30 ռումբ ձգեցին Տրէվս քաղաքի վրա։

Մենք բոլորովին վանեցինք գիշերվայ ընթացքում թշնամու երեք յարձակումը Բուաշանգալի դէմ—Սուշէից դէպի հիւսիս։ Սոմմայից դէպի հարաւ շարունակվում է կռիւ Լիգօնի շրջանում։ Վերդէնից դէպի հիւսիս գերմանացիք վանվեցին։ Գիշերվայ ընթացքում տեղի էր ունենում չափազանց տաք հրացանաձգութիւն խրամատների միջև։ Մեր արտիլէրիան ցրեց թշնամուն Էպլիից դէպի արևելք և ռմբակոծեց Բլամօնց կայարանը։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 հոկտեմբերի

ՀՌՈՄ.— Գլխաւոր բանակից հաղորդում են. Սրի ու խոհեմ գործողութիւններով մեր զօրքերին աջողվեց սուինային կռւից յետոյ ձեռք ձգել չափազանց ուժեղ Պրէգազինա դիրքը։ Գործը սկսվեց լոյս սեպտեմբերի 30-ի գիշերը։ Մեր զօրքերը, չը նայած տեղի աննպաստ պայմաններին և թշնամու մարտկոցների կատաղի կրակին, գրոհ տուին և հասան թշնամու խրամատներին։ Գիշերով մեր զօրքերը առաջացան և ճանապարհ բացին խութերի միջով։ Առաւօտեան հոկտեմբերի 2-ին յարձակումը վերսկսվեց։ Թշնամու ուժեղ թնդանօթային ռմբակոծութեան տակ մեր զօրքերը վերցրին Պրէգազինան և յաղթական առաջացան դէպի հիւսիս՝ Լէգրօ հովտի ուղղութեամբ, ուր և ամրացան։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 հոկտեմբերի

ՍՕԼՈՒՆ.— Մամ[illegible] հաղորդում է, որ սերբ-ֆրանսիական զօրքերը հոկտեմբերի 3-ին գրաւեցին Ստրումիցան կատաղի կռւից յետոյ, որի ժամանակ ֆրանսիական արտիլէրիան աւերումներ գործեց բուլղարների շարքերում։

Դէմիրհիսարից տեղեկացնում են, որ բուլղարները հեռանում են Մէլնիկից և Պէտրիչից։

ԻՏԱԼԻԱՅԻ ՉԵԶՈՔՈՒԹԻՒՆԸ ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 հոկտեմբերի

ՀՌՈՄ.— «Ջիօրնալէ-դ'Իտալիան» պատասխանում է այն հարցերին, թէ ինչու Իտալիան ձեռնպահ է մնում Բալկաններում դաշնակիցների գործողութիւններին մասնակցելուց, և ինչպիսի ռազմի գործողութիւնով Իտալիան մտադիր է փոխարինել իր հանդէս գալը Բալկաններում։ Լրագիրը մատնանշում է, որ անհեթեթութիւն է պահանջել իտալական կառավարութիւնից՝ մերկացնել իր նախագծած ռազմի ձեռնարկութիւնները, որովհետև այդ դէպքում գործողութեան ծրագիրը յայտնի կը լինի թշնամուն։ Միայն խստագոյն գաղտնապահութեամբ կարելի է յանկարծակիի բերել թշնամուն, ուստի և հարկ չը կայ անհամբերութիւն երևան հանել։ Իտալական կառավարութիւնն արդէն տուել է այնքան որոշակի ապացոյցներ իր բարեխղճութեան ու տոկունութեան, որ անարդարացի ու անտեղի է կասկածել նրա ցոյց տուած ծառայութիւնների բնոյթի մէջ։

Սօնինօն մինիստրների խորհրդի նիստում մանրամասն զեկուցում տուեց միջազգային դրութեան և այն դիրքի մասին, որ բռնել է Իտալիան բալկանեան դէպքերի հանդէպ։

«Մէսաժէրօյի» տեղեկութիւնների համաձայն, մինիստրների խորհուրդը հաւանութիւն է տուել այդ դիրքին, որի էութիւնը կայանում է նրանում, որպէսզի ամենաուշադիր կերպով հսկողութիւն սահմանվի բալկանեան դէպքերի զարգացման վրա, որովհետև մտադրութիւն կայ անհրաժեշտութեան դէպքում գործնականապէս ապացուցանել Իտալիայի լիակատար համերաշխութիւնը համաձայնութեան մեծ պետութիւնների հետ։

ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)
4 հոկտեմբերի

ԱԴԻՍ-ԱԲԵԲԱ.— Աբիսինիայի մինիստրների խորհուրդը բողոքեց գերմանական միսսիայի միջամտութեան դէմ, որ փորձում էր արգելք լինել հայերի մեկնելուն, որոնք կամենում են մտնել ֆրանսիական զօրքի մէջ։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 հոկտեմբերի

ՄԱՐՍԷԼ.— Հաղորդում են, որ ֆրանսիական «Ադմիրալ Համելէն» շոգենաւի ընկղմվելու ժամանակ խեղդվել են 71 մարդ։

ՍՏՕԿՀՈԼՄ.— Մալմէից հաղորդում են լրագիրներին, որ գերմանական մի լաստ Զասնից Տրէլլեբօրգ նաւագծի վրա կպաւ գերմանական մի ռազմանաւի. վերջինս ջրասուզվեց. նաւաստիներից 40-ը խեղդվել են։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՁԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պատերազմի սկզբից մինչև 1915 թ. հոկտ. 1-ը Կարմիր Խաչը ստացել է նուէրներ 9,311,081 ռ.։

Մինիստր նախագահ Վիվիանիի հեռագիրը յանուն Սազօնովի. «Մինիստրութեան կազմի մէջ տեղի ունեցած փոփոխութեան առթիւ իմ պարտականութիւնն եմ համարում արտայայտել ձեր գերազանցութեանը անձնական զգացմունքներ և յայտնել ձեզ, որ հանրապետութեան կառավարութիւնը մտադիր է շարունակել իր վճռական դաշնակցի համաձայնութեամբ միևնոյն քաղաքականութիւնը, որը ցայսօր նրանց այնպէս բաղդաւոր կերպով միացրել է»։ Սազօնովը պատասխանեց. «Շնորհակալ եմ ձեր գերազանցութիւնից սիրալիր հեռագրի համար և իմ պարտականութիւնն եմ համարում հաւատացնել ձեզ իմ՝ դէպի ձեզ տածած անկեղծ համակրութեան զգացմունքների մէջ։ Ձեր գերազանցութիւնը միշտ կը գտնէ յանձին իմ աշխատակցի, նուիրված անդաւաճան կերպով այն գործին, որի համար մեր երկու դաշնակից երկիրները միասին կռւում են»։

Մինիստրների խորհուրդը յատկացրեց 5 միլիօն ռուբլի Մեծ Իշխանուհի Տատեանա Նիկոլայէվնայի կօմիտէտին՝ պատերազմական գործողութիւններից վնասվածներին, որոնց թւում և փախստականներին, ժամանակաւորապէս օգնելու համար, և որոշեց յատկացնել համառուսական քաղաքների միութեանը 4 միլիօն ռուբլի՝ հակավարակման սանիտարական ձեռնարկութիւնների համար, և Մոսկվայի քաղաքային ինքնավարութեանը 21,876,500 ռուբլի՝ հիւանդ ու վիրաւոր զինւորականներին խնամելու ծախքերի համար։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Սօֆիայից հաղորդում են, որ Պետրօգրադի նախկին դեսպան Մաջարօվը յանձնվելու է զինւորական դատարանին՝ ռուսաց մամուլի ներկայացուցիչներին արած յայտարարութիւնների համար։

Սօֆիայից տեղեկացնում են, որ ռուսաց զօրքի մէջ գտնւող բուլղար օֆիցէրները, ի թիւս որոց և Ռադկօ Դիմիտրիէվը, նկատվելու են իբրև դասալիքներ, եթէ չը վերադառնան Բուլղարիա։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՁԸ

◆ «Н. В.»-ն դիւանագիտական աղբիւրներից տեղեկացնում է, որ Պետրօգրադի կառավարութիւնը անհրաժեշտ է գտնում պատերազմ յայտարարել Բուլղարիային։ Սազօնովն այս օրերս մեկնում է Սրբզայկան կայանը։

◆ «У. Р.»-ի տեղեկութիւնների համաձայն, ֆրանսիական զօրքերը առաջին ընդհարումը բուլղարների հետ ունեցել են Գեվգելիի մօտ։

◆ Պետրօգրադի սերբ դեսպանը Պաշիչից հեռագիր ստացաւ, որ սերբերը ջարդել են գերմանական երկու դիվիզիա։

◆ Անգլիական նաւատորմը պաշարել է Դէդէաղաջը՝ Բուլղարիան Եգէյեան ծովի կողմից կտրված է Եւրոպայից։

◆ Հաղորդում են, որ բուլղարական Լովչա քաղաքում զինւորները ապստամբվել են։ Հետևանքում ստացվել են 60 սպանված և վիրաւոր զինւոր։

◆ Պարիզից Բէլօուսովը հեռագրում է «Р. В.»-ին, որ Իտալիան Բալկանները կուզարկէ մեծ արշաւազօր։ Մինչեռ «Б. В.»-ի տեղեկութիւնների համաձայն, Իտալիան որոշել է ոչ մի մասնակցութիւն չունենալ Բալկաններում։

◆ Բուխարէստից հեռագրում են, որ կայացաւ մինիստրների խորհրդի նիստը՝ Բրատիանուի նախագահութեամբ։ Հնարաւոր է համարվում, որ Ռումինիան հանդէս գայ քառեակ համաձայնութեան օգտին հոկտեմբերի վերջերին։

◆ Ռուսաց դիւանագէտների կարծիքով, Յունաստանը հանդէս կը գայ այն ժամանակ, երբ դաշնակիցները ուղարկած կը լինեն իրանց զօրքերը Սերբիա։ Ռումինիան նոյնպէս պահանջ է դրել դաշնակիցներին՝ ուղարկել բալկանեան ռազմադաշտը 300,000 զինւորից ոչ պակաս, որից յետոյ ինքն էլ հանդէս կը գայ յօգուտ նրանց։

◆ «Р. Инвалидъ»-ը կարծում է, որ, բոլոր նշաններին նայած, աւստրո-գերմանական զօրքերի առաջխաղացումը մեր զօրաճակատի վրա ասես վերջանում է մեր զօրքերի դիմադրութեան պատճառով։ Մեր թշնամիները, ըստ երևոյթին, վճռել են գործադրել մեր դէմ դիրքապաշտպան կռիւ։

◆ „Н. Б"»-ին հեռագրում են Կօպենհագենից, որ հոլլանդացիք ուժեղ կրակ են բացել այն ցէպպէլինների վրա, որոնք վերադառնալիս են եղել Լոնդոնի վրա թռիչք կատարելուց յետոյ՝ հոլլանդական երկրի վրայով։

◆ Հաղորդում են, որ Բրէստ-Լիտովսկ է եկել Վիլհէլմ կայսրը։ Քաղաքում գերմանացիք կառուցանում են նոր բերդ։

◆ «Р. См.»-ին հեռագրում են Խարկովից, որ Բարձրագոյն հրամանով Գերագոյն Զօրահրամանատարի կայանն է ուղարկվելու Պէչչանի ս. Աստուածածնի հրաշագործ սրբապատկերը։

◆ Պետրօգրադ է եկել անգլիական զինւորական պատգամաւորութիւն։

◆ Յունաց պաշտօնական աղբիւրներից հաղորդում են, որ Յունաստանի սահմանի մօտ գտնւում են մօտ 50,000 բուլղար. այնտեղ լուրջ կռիւ է սկսվել։

◆ Բեռլինից հաղորդում են, որ ֆոն-դէր-Գոլց-փաշան 200,000 զինւորից բաղկացած զօրաբանակի գլուխ անցած դուրս է եկել Ադրիանուպոլսից։ Այդ զօրքը կըա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

«ԵՕԹԸ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐԸ»*)

Բ. Մաս

I

Կահիրէի «Լօնդօն» հիւրանոցում առանձին համարում, եօթը սենեակից բաղկացած, իջևանել էր մի անծանօթ իշխանուհի, որը դարձել էր ամբողջ մայրաքաղաքի արիստօկրատիայի և միսսիաների խօսակցութեան ու հետաքրքրութեան առարկան։ Նա միշտ փակ պատգարակով էր ման գալիս. սև ու թանձր քօղի տակից լուսնի պէս ցոլում էր նրա մարմարիօնի նման սպիտակ դէմքը և, ինչպէս մատուցակները նկատել էին, զմրուխտի գոյն աչքեր ունէր և ոսկեթել ծամեր։

Տիկինը հետաքրքրվում էր եգիպտական հնութիւններով և ամբողջ մի ամիս առանձնակի մտել էր Մահմէդ-Ալի փաշայի պալատի թանգարանը, որտեղ ֆրանսիացի, գերմանացի հնագէտները կենտրոնացրել էին հին Եգիպտոսի 50 դարում ունեցած և աւանդ թողած քաղաքակրթութեան կուլտուրական և գեղարուեստական գործուածքները։ Տիկինը միշտ ձեռքը բռնած Մօրգանի առաջնորդ-ձեռնարկը՝ ամեն ինչ տեղին քննում և ձեռնարկի մէջ մատիտով նշանակում էր։ Կահիրէում ջէնտըլմէն չը մնաց, որ չը հետամտի Ֆրանկ իշխանուհուն. Խըդիվի բոլոր արիւնակիցները շատ մեծ հետաքրքրութեամբ աշխատեցին նրան գրաւել, բայց եգիպտական սֆինքսների նման [illegible] իշխանուհին այնքան անտարբերութեամբ վարվեց իրան հետամտողների հետ, որ բոլորն էլ յուսահատ ետ կեցան։

Երբ իշխանուհին աւարտեց Մահմէդ-Ալի փաշայի մուզէյի ուսումնասիրութիւնը, անգլիական զինւորների ուղեկցութեամբ և մի քանի խափշիկ կիների սպասաւորութեամբ, յատուկ վրաններով ճանապարհ ընկաւ Մեմֆիսին, բուրգերին, մեծ սֆինքսին, ապա Թէբէի, Լուքսօրի աւերակ պալատներին և տաճարներին այց տալու և շարունակելու իր պեղումները։ Միլիօնէրների մի քանի յանդուգն զաւակներ, եգիպտական կալուածատէրերի և իշխանների մի քանի շառաւիղներ շարունակեցին իրանց հետամտութիւնները, գիտական արշաւանքի պարունակով գնացին այն կողմերը, ուր իջևանում և մնում էր իշխանուհին։ Բայց զուր. ոչ ոք չը կարողացաւ ոչ միայն ծանօթանալ այդ խորհրդաւոր գեղեցկուհու հետ, այլ ոչ ոք չը տեսաւ այդ չքնաղի աչքերը, դէմքը։

Որքան որ իրան հեռու էր պահում իշխանուհին հետամտողներից, այնքան էլ ինքն էր հետամտում փոխադարձաբար իրանով հետաքրքրվողներին, բայց ոչ ոք նրան բաւականութիւն չէր տալիս, ոչ ոք արժանի չը դարձաւ իշխանուհու ուշադրութեան։ Սակայն ընիկ և օտարական դրամի և արիւնի ազնուականները թէև յուսահատ հեռանում էին, բայց հոգով, սրտով և ուշքով միշտ թեքված էին իշխանուհու կողմը, ձգտում էին նրան տեսնել, նրա գեղով պարուրել իրանց աչքերը, նրա հայեացքներով յագեցնել իրանց հետաքրքրութիւնը, կանգնել բաւականութիւնը վայելել և նրա բոյրով արբել։

Երբ գեղանին վերջացրեց իր ճանապարհորդութիւնը, վերադարձաւ Կահիրէ և յատուկ թէլլալների միջոցով յայտարարեց, թէ ինքը ցանկանում է գնել հնութիւններ, հին դրամներ, նկարներ, քանդակներ, արձաններ, պապիրուսներ և պատմական զարդեր։ «Լօնդօն» հիւրանոցում որոշ ժամերին հնավաճառներն իրանց թանգագին բեռներով տեղ էին գրաւում հիւրերի սրահում, դասաւորում էին իրանց ապրանքը յատուկ սեղանների և պատրհանների վրա, ուր իշխանուհին մտնում, զննում էր առաջադրված իրերը և հաւանած առարկան վերցնում տանում էր իր ընդունարանում գնահատելու, շատ քիչ բան էր հաւանում և վերցրած առարկային լիառատ վարձ էր վճարում։

Իշխանուհու ոսկիների կոյտերը կարեցին շատ հնավաճառների քունը. ագահ աւազակները սկսեցին պեղել Կահիրէի բոլոր ապարանքներն ու կանանոցները, որպէսզի այնպիսի նիւթեր ձեռք բերեն, որ կարողանան թէ իշխանուհու ոսկիներով և թէ նրա չքնաղ պատկերի զննումով յագենալ։ Ինչպէս որ մուզէյում և աւերակներում հետամտում էին իշխանուհուն ոսկու և արիւնի ազնուականները, այժմ դրանց նորից սկսեցին յաճախել «Լօնդօն» հիւրանոցը հնավաճառի պարկերով, որպէսզի հնարաւորութիւն ունենան տեսնել այդ չքնաղին, խօսել նրա հետ և հաճոյանալ։ Բայց իշխանուհին դրանց այնպէս էր ճանաչում, որ դէմքերին անգամ չէր նայում, իսկ դրանց բերած ոսկի ու շողակի առարկանները երբէք չը յափշտակեցին չքնաղին։

Վերջապէս երիտասարդ և վայելուչ եգիպտացի մի իշխան ներկայացրեց իշխանուհուն մի զոյգ մարգարիտ գինդ, որոնց ամեն մի հատը մի-մի գլուարի չափ էր, գլուարի նման կանաչաւուն գոյնով, քիչ թուխի զարնող և այնքան աքանչելի փայլ ունէր, որ յափշտակեցին իշխանուհու միտքը։ Իշխանուհին, լաւ զննելուց յետոյ, օղերը տարաւ իր ընդունարանը, քննեց և ապա կեղծ հնավաճառին հարցրեց դրանց գինը։

— Տասը հազար անգլիական լիրա,— ասաց կակազելով իշխանը ֆրանսերէն լեզուով։

— Հօ՞,— ասաց իշխանուհին,— այդ որքան սուղ է եղել։ Ես չէի կարող երևակայել, թէ մի զոյգ ոստրէի գինը կարող էր այդքան մեծ լինել...

— Ոստրէներն արժեն տասը սու (10 կ.), իշխանուհի, բայց սրանք ոստրէներ չեն, այլ ոստրէների թիկունքի մէջ տասնեակ տարիներով ուռճացած վէրքերի ժահրերն են, որոնք անգնահատելի կսկիծ ու խոց են պատճառել կրողին։

— Աւելի վատ. քանի որ ես դրանք զննելիս միշտ պիտի յիշեմ և մտածեմ ոստրէի կրած տասնամեայ մորմոքների մասին, լաւ է՝ չեմ առնի. ներեցէք, որ ձեզ նեղութիւն պատճառեցի. կսկիծի մասին քիչ կը յիշեմ։

Ասաց և այնպիսի դիրք բռնեց, որ ուզում էր ասել կեղծ հնավաճառին, թէ կարող էք բարով գնալ։ Այս խօսակցութեան ընթացքում եգիպտացի գեղահասակ իշխանը թանձր քօղի տակից մասամբ տեսել էր իշխանուհու դէմքը, գրաւիչ աչքերը, ոսկեթել մազերը, արձանի նման բարձր վիզը, լայն կուրծքը, հմայիչ, դիւթիչ ձայնը և անուշ բոյրը. այնպէս էր ազդուել, այնպէս էր արբել, որ փոխանակ թօւլանալու, գըլուխը խոնարհելու և դուրս գալու՝ պատասխանեց.

— Ներեցէ՛ք, իշխանուհի՛, թոյլ տուէ՛ք ինձ երկու խօսք ես խօսելու. եթէ անհաճոյ թուի առաջարկս, իսկոյն հրաժեշտս կը տամ։

Տիկինն այնպէս ուսերը շարժեց, որ կարծես ուզում էր ասել իշխանին՝ թէ քեզ լսում եմ հաճութեամբ։

— Սա հազուագիւտ մարգարիտ է. սա տոհմական գանձ է. սրանց կրողը երբէք չէ հառաչել և բաղդը նրան միշտ ժպտացել է։ Մանաւանդ որ սրանք գտնված են դամբարանում, Ամէնօվիս փարաւոնի «կին քրոջ» մումիայի ականջներին, որոնք թալիսմանված են իրանց ժամանակի քուրմերից։ Եթէ ցանկանում էք, որ միշտ երիտասարդ ու թարմ մնաք, եթէ ձեզ հաճելի է, որ ձեր չքնաղ մարմինը երբէք չը թօշնի ու չը թառամի, եթէ ուզում էք մինչև գերեզման պահպանել ձեր հրապոյրը, գնեցէք այս գոհարը։ Այս օղերը ձեր ականջներին միշտ սիրոյ մեղեդիներ են հասցնելու, այս օղերը ձեր սրտին անվերջ ծիծաղ ու հրճուանք են պատճառելու։ Ես դեռ աշխարհում չեմ տեսել մի անման փէրի, որ ձեզնից աւելի արժանաւորութիւն ունենար այդ օղերին տիրանալու։

— Օհօ, դուք գուշակ էք եղել, ոչ թէ հնավաճառ, բէյ,— ասաց իշխանուհին.— դուք ինչ գիտէք, որ ես անման եմ, որտեղից լսեցիք։

— Այդ քնքոյշ ձայնը, այդ զգայնալի բաղխումները, այդ շարժումներն ու դիրքը վկայում են, որ դուք ոչ միայն չքնաղ, այլ փէրիների զաւակ էք... Ուստի բացի ձեզնից չեմ կարող աւելի արժանավայել մի ուրիշը գտնել և նրան վաճառել այս անգին գոհարները...

— Լաւ էք ասում, հաւատում եմ, որ ձեզ նման մի գեղահաս երիտասարդի, մի բէյի շրթունքներից չէր կարող այդքան յստակ ձայնով դուրս թափվել կեղծ բառեր։ Հաւատում եմ, որ ձեզ խօսեցնում են ազնիւ զգացումները, ոչ թէ չարչիի շողոմները։ Բայց ի՞նչ օգուտ, որ ես այնքան դրամ չունեմ, որ կարողանամ ձեզ անմիջապէս վճարել տասը հազար լիրա...

— Դուք վերցրէք այդ գանձը, վճարեցէք

---

*) Ա. մասը տես «Մշակ» №№ 186, 187 և 188.

ւելու է, իբր թէ, ռուսաց արշաւազօրի դէմ:

◆ Բոլգարները ռմբակոծում են Կրուշեվացը, որի բնակիչները փախել են Ռումինիա:

◆ Գերմանիան վստահեցրել է Յունաստանին, թէ Բոլգարիայի կողմից նրան վտանգ չէ սպառնում:

◆ Յունաստանը մտադիր է զօրքեր ուղարկել Ալբանիա, որպէսզի ճնշէ սերբերի դէմ կազմակերպված ապստամբութիւնը:

◆ «Рѣчь»-ը ասում է, որ Րիգայի շըրջանում թշնամու գործողութիւնները նպատակ ունեն ոչ այնքան գրաւելու Րիգան, որքան կատարելու թիկունքից շարժում հարաւ-արևելեան կողմից: Նախօրշտադի մօտ շարունակվող հրաձգութեամբ թշնամին փորձում է կապ հաստատել Դվինսկի և Րիգայի շրջանների միջև, ըստ որում հակառակորդի բոլոր ջանքերն ուղղված են՝ դարձնելու մեր ուշադրութիւնը Դվինսի շրջանի հիւսիսային զօրաճակատից, ուր հակառակորդը կորցրեց 80,000-ից ոչ պակաս մարդ:

◆ «Рѣчь»-ը հաղորդում է, որ «Humanité»-ում տպված է 1-ին Պետական Դումայի անդամ Ալէքսինսկիի նամակը, որ կտրուկ կերպով յայտնում է, թէ յայտնի սօցիալ դեմօկրատ Պարվուսը պրօվօկատոր է, ծառայում է Թիւրքաց ու գերմանական կառավարութիւններին: Նա եղել է գերմանական ոստիկանութեան մէջ և փորձել է կաշառել ռուս քաղաքական էմիգրանտներին:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Երէկ վերադարձաւ ներքին գործերի մինիստրը:

ՎԵՐՆԻ.—Լոյս հոկտ. 5-ի գիշերվայ ժամը 1 և 15 ր. զգացվեց երկրաշարժ, որ տևեց 20 վայրկեան:

ՏՕԿԻՕ.—Մամուլը կարծում է, որ Չինաստանում միապետութիւնը վերականգնելու ժամանակ անխուսափելի են խռովութիւններ: Լուրերի համաձայն, ճապօնական կառավարութիւնը վճռել է բարի խորհուրդ տալ Չինաստանին այդ խռովութիւններից խուսափելու համար:

Չինական մինիստրութիւնը մշակել է 1915 թ. տեսակի հրացանների նոր ձևը, որպիսի հրացաններով մտադրութիւն կայ վերազինել զօրքը:

ՆՈՐ-ԲՈՒԽԱՐԱ. Այրվում է բուխարական կառավարութեան բամբակ մաքրող ահագին գործարանը:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պետական Դումային ներկայացվեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան նախահաշւին կցված բացատրիչ գրութիւնը, որի մէջ, ի միջի այլոց, մատնանշվում է, որ մինիստրութիւնը մտադիր է այս տարի օրէնսդրական հաստատութիւններին ներկայացնել օրինագծեր ընդհանուր ուսման և դպրոցական շինարարութեան մասին. բացի դրանից մշակում է բարձր տարրական դպրոցների ցանցի նախագիծ և մերձաւոր 10 տարում միջնակարգ դպրոցներ բանալու պլան:

ՈՒՐՖԱ.—Ուրֆայի կառավարութիւնը 2000 զինուորից բաղկացած զօրաբաժին է ուղարկում՝ Կալգան Ուրգա ճանապարհը աւազակախմբերից մաքրելու համար:

ԳԵՐԱԳՈՅՆ ԶՕՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԿԱՅԱՆ. Այսօր Նորին Կայսերական Բարձրութիւն Արքայազն Գահաժառանգի անուանակոչութեան օրը Արքայական կայանում մատուցվեց պատարագ և կատարվեց մաղթանք: Պատարագին ներկայ էին Թագաւոր Կայսրը, Գահաժառանգ և Մեծ Իշխան Ալէքսէյ Նիկոլաեվիչը, Մեծ Իշխաններ Պաւէլ Ալէքսանդրովիչը, Դիմիտրի Պավլովիչը, Գէօրգի Միխայլովիչը, Պալատի մինիստրը, Գեն. Զօր. շտաբի պետ գեներալ Ալէքսէեվը, Կայսրի շքախումբը, շտաբի պաշտօնեաները, զօրամասերի հրամանատարները:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պ. Հ. Գ. Պետութեան զանազան քաղաքներից ստացել է հեռագիրներ, որ Գահաժառանգի անուանակոչութեան օրը կատարվել են հանդիսաւոր մաղթանքներ: Մայրաքաղաքն այսօր զարդարված է դրօշակներով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՑԱԿ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

Ստացանք՝ 1) Էջմիածնից, սինօդից, հայկական 6-րդ դրուժինայի վարիչ մարմնին յանձնելու համար 3350 ռուբլի, 2) Սուխումից, բժ. Միք. Զարգարեանից 10 ր.: Գումարը 3360 ր.: Նախորդ ստացված 45,916 ր. 12 կ. գումարի հետ ստացել ենք 49,267 ր. 12 կ.:

ՑՈՒՑԱԿ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Ստացանք Սումի քաղաքից (Խարկովի նահ.) Փիլիպպոս Ալլահվերդեանից 2 հակ հագուստեղէն՝ 3 պուդ 6 ֆունտ քաշը: Հաւաքված է տեղական հայերի շրջանում:

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Թերմեզից, Արսէն Սափարեանի միջոցով, հանգանակված իր ընկերների շրջանում՝ 16 ռուբլի:

ԹԱՐՍ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր հայկական իրականութիւնը, կեանքը տալիս է մեզ յաճախ հակառակ հասկացողութիւնների, այլանդակված գաղափարների ամբողջ շտեմարաններ: Այն, ինչ որ լուսաւոր, քաղաքակրթված ազգերի մէջ համարվում է վախկոտութիւն, վատութիւն, (lâcheté), մեզ մօտ հաշւվում է իբրև հերոսութիւն. այն, ինչ որ լուսաւոր, քաղաքակրթված ազգերի մէջ համարվում է ազնուութիւն, չիտակութիւն, մեզ մօտ հաշւվում է իբրև վատութիւն, անազնուութիւն: Դիցուք մի որևէ վայրում, երկրում, մի խումբ մարդիկ, գրգված մի քանի պարագլուխներից, սկսել են կռուել. Նրանք շըրջապատված են հակառակորդի, թշնամու զօրքից: Եւ ահա պարագլուխները, նկատելով որ հակառակորդը պէտք է յաղթէ, մտածելով միայն իրանց սեփական կաշին փրկելու, լքում, թողնում են կռւողներին և իրանք փախչում, փոխանակ մնալու և կռւելու մինչև վերջին շունչը այն մարդկանց հետ, որոնց իրանք են ոտքի հանել: Նրանք փախչում են առանց խղճահարվելու, լաւ իմանալով որ այդ խեղճ խումբը ամբողջովին ջնջվելու է: Եւ երբ այդպիսի ամօթալի փախուստով ազատվելով երևան են գալիս ընկերների և հասարակութեան մէջ, ընկերները և հասարակութիւնը ոչ թէ անարգանքի սիւնին են բևեռում նրանց, այլ դեռ հրատարակում են հերոս և նոյնիսկ լրագիրների միջոցով աւետում նրանց գալուստը՝ իբրև հերոսների գալուստ:

Ահա այդ ժամանակ, գաղափարների և հասկացողութիւնների այդպիսի այլանդակութեան ժամանակ, յիշում ես ակամայ սպարտացի այն մօրը, որն, երբ իր զաւակ զինւորը փախչելով պատերազմի դաշտից՝ հասաւ իր տունը, վռնտեց նրան ասելով «ես քեզ պէս զաւակ չունեմ»:

Այս պատմական դէպքը յիշեցինք, երբ նորերս մի թերթ յայտարարեց պարծանքով, թէ Սասունում կռւողների պարագլուխները կարողացել են փախչել և ազատվել: Արդարև հերոսներ, բայց թարս մտքով:

Շահրիար

ՊԵՏՔ Է ԴԵՆ ՇՊՐՏԵԼ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Անձնական խիստ դառն փորձերը ցոյց են տուել, որ եթէ մեր գիւղերը ամեն կերպ հետ են մնում և տնտեսապէս տալիս սեփական շահերն անգամ, դրա գլխաւոր պատճառը ոչ թէ այն է, որ, ինչպէս առ հասարակ սիրում ենք շաբլօնօրէն ծամծմել, թէ մեր գիւղերը չունեն բառիս լայն իմաստով հասկացված ինտելիգենցիա, այլ այն, որ գիւղում գտնվող տեղական կարող և գիտակից ոյժը չափից դուրս անտարբեր և սառն է վերաբերվում դէպի իր շուրջը կատարվող երևոյթները: Թիւրիմացութիւնների մէջ ընկնելուց խուսափելու համար հեռու չեմ գնայ և կը խօսեմ հէնց իմ ծննդավայր Շնող գիւղի մասին, ուր ստիպված եմ ունենում յաճախ լինելու:

Այդ գիւղում, ճիշդ է, չը կան համալսարան աւարտած գիտնական ինտելիգենտ ոյժեր, բայց դրա փոխարէն կան մտաւոր պատրաստութիւն ունեցող և գիւղի շահերը շատ լաւ և բազմակողմանի կերպով ըմբռնող այնպիսի ոյժեր, որոնք օրինակելի կերպով առաջ կը վարեն իրանց հասարակական գործերը, եթէ միայն ուզենան և, որ գլխաւորն է, դէն շպրտեն իրանց վրայից անտարբերութիւնը ու մէկ էլ էդ անիծված կողմնապահութիւնը:

Գիւղական սև իրականութեան մէջ կողմնապահութիւնը մի այնպիսի զարհուրելի չարիք է, որ «քօլտասափ» անելով շատ ուղղութիւններ՝ հիմնովին տակն ու վրայ է անում հասարակութեան թէ տնտեսականը և թէ նիւթականը: Եւ պէտք է ցաւօք սրտի խոստովանեմ, որ մեր հասարակութիւնը այս երեք դէպքում ևս տուժում է ամենաչարաչար կերպով: Մեկի խաթրը չը կոտրելու համար զոհել ամբողջ հասարակութեան իրաւունքը և շահերը, անտարբերութեան զոհ դարձնել այդ նոյն հասարակութեան բարոյականն ու տնտեսականը—ահա այն հիմնական պակասութիւնը, որի շնորհիւ գլխաւորապէս տուժում են հասարակութեան գործերը:

Այժմս, օրինակ, երբ գիւղական կեանքին շունչ ու հոգի տուող ոյժը, իւրաքանչիւր ընտանիքի աշխատելու ընդունակ տարրը պատերազմի է գնացած, և գիւղերը մնացել են անտէր, բնականապէս գիւղական տականքը, սև ոյժը, օգտվելով այդ անտէրութիւնից, բարձրացրել է իր գլուխը և քայքայել սկսել շինականի անտէր մնացած տնտեսութիւնը: Ահա այստեղ է, որ գիւղում մնացող ոյժերը դուրս պէտք է գան ասպարէզ և ձեռք-ձեռքի տուած՝ միջոցներ որոնեն այդ մութ ոյժերի դէմ կռւելու, վերացնելու, պաշտպանեն անտէր մնացած, բայց դրանց երեսին «մոխիր տուող» իւրաքանչիւր ընտանիքի և ամբողջ հասարակութեան իրաւունքն ու շահերը, այլ ոչ թէ իրանց անտարբերութեամբ ու կողմնապահութեամբ լաւ ականատեսի և ակամայ խրախուսողի խայտառակ դեր կատարեն: Սա դատապարտելի է առ հասարակ, բայց մահացու յանցանք է մանաւանդ ներկայ պայմաններում...

Մի կողմ թողնենք առ այժմ տարին տասներկու ամիս անտարբերութեան թանձր քօղի տակ գիւղում տեղի ունեցող երևոյթների մասին խօսելը, վերցնենք ամենավերջինը և ամենակարևորագոյնը: Գիւղին այս տարի, ինչպէս յիշել եմ և նախորդ թղթակցութեանս մէջ, սպառնում է սով, եթէ ժամանակին ձեռք չառնվեն միջոցներ: Այդ միջոցներից մէկն էլ համարվեց համայնական համախոսականով հասարակութեան անունով ցորեն կամ ալիւր բերել տալը գիւղի համար՝ և իր գնով վաճառելը հացի կարիք զգացող գիւղացիներին: Հարկաւոր էր ուրեմն լսել ժողովրդի աղաղակը, գումարել հասարակական ընդհանուր ժողով, կազմել համախոսական և միջնորդել ուր հարկն է՝ վագոններ ստանալու թոյլտւութիւն ձեռք բերելու, որպէս զի «գիւղի համար էժան հաց բերեն և բաժանեն»... Կաջողվի՞ դրանց այդ ձևով վագոններ ստանալ թէ չի աջողվի, խնդիրը այդ չէ, այլ այն, որ այդ կարող ոյժը փոխանակ արթուն պահապանի նման ասպարէզ գալու և իր եռանդուն մտիկ տուող ժողովրդի հրամայող աղաղակին ընթացք տալու՝ իր անտարբերութիւնով թոյլ է տալիս, որ այդ ժողովրդի իրաւունքները և շահերը զոհ գնան մի երկու անհատների ապահով շահերին... Ահա այս է դատապարտելին և վրդովեցուցիչը, որին և անշեղ կերպով հետևում է գիւղի կարող ոյժը: Չարիքը ուրեմն ոչ թէ այն բանի մէջ է, որ գիւղը զուրկ է ինտելիգենցիայից, այլ նրա մէջ, որ տեղական նոյնիսկ գիտակից ոյժը բռնված է անտարբերութեան և կողմնապահութեան ցաւով: Եւ ամեն մէկը, որ կամենում է ընդհանրապէս օգնել գիւղացուն, պէտք է եթէ ոչ օրերով, գոնէ մի քանի ժամով մտնի այդ գիւղացիների մէջ, ազդէ տեղական կարող ոյժերի վրայ, որպէսզի նրանք օտարի ներկայութիւնից գոնէ թերևս ազդվեն ու ամաչեն, դուրս գան իրանց անտարբեր դրութիւնից և ձեռք վերցնեն արեան ծովերի մէջ լողացող մարդկանց անտէրացած հաւաքական ընտանիքների շահերը «խաթր իշուն» այս ու այն անհատի շահին զոհաբերելու դատապարտելի սովորութիւնից... Այսպէս, առանց այս նեղութիւնը յանձն առնելու սենեակներում գրված ամեն մի թէկուզ «քարը ճաքացնող» յօդուած անգամ գիւղացու համար կունենայ այն նշանակութիւնը, ինչ որ քաղցածի առաջ ամենահամեղ կերակուրների անուններ շարելը:

Բ. Մկրտումեան

Ե. Գ.—Ի դէպ, Շնողում գոյութիւն ունեցող սպառողական միութեան վարչութիւնը դիմել է Հայ Գիւղատնտեսական Ընկերութեանը, որպէսզի սրա միջնորդութեամբ հասարակութեան համար մատչելի գնով ցորեն կամ ալիւր ձեռք բերվի իր գնով գիւղացիներին վաճառելու: Յուսով ենք, որ Գիւղատնտեսական Ընկ. յարգելի վարչութիւնը ամեն ջանք գործ կը դնի այս խոշոր պարտականութիւնը կատարելու: Նոյն

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ-ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Մինչև մի շաբաթ կազմակերպուած կը լինի աղուաշէն ընդարձակ նոր սրահը փախստականների ձմեռային ապաստարանի համար, որ կառուցվում է ընդարձակ այգու մէջ: Սրա մէջ կը կենտրոնանան բացի ճաշարանից, թէյարանից, և խոհանոցն ու թոնիրը, որպէսզի հէնց այստեղ էլ թխվի հացը:

Ստացել ենք նուէրներ.

Իրերով՝

Մ. Ն.-ից 2 վերմակ, 2 ձմեռային դէրիա, 2 զոյգ գուլպա և մի շալ: Ռոզինա Հախումեանից անկողին (բարձ, վերմակ և դօշակ), Կոնստանդին Հէջուբեանից՝ մի ոչխար և 20 ֆ. բրինձ:

Դրամով՝

Անահիտ և Աննա Շավերդեան քոյրերից 5 ր. ի յիշատակ իրանց քոյր Աստղիկի (2 պատկերի վճար), Ստաւրոպոլից՝ Սոֆիա Ենիկոլոպեանից՝ ծանօթների շրջանում ժողոված 40 ր., Կերկիից՝ Փիփրոնիա Թորոսեանից 5 ռուբլի:

«Մշակի» միջոցով՝

Իւզովկայից՝ Տէր-Կարապետ քահ. Դաւթեանի միջոցով տեղական «Եղբ. Օգն. մասնաճիւղից 6 ր., Բաքուից՝ բժշ. Շմաւոն Կ. Աղամիրզեանից՝ Պօղոս Յ. Աղամիրզեանի դագաղին պսակ դնելու փոխարէն 50 ր., Մարիամ և Քրիստափոր Ելչիբէկեաններից՝ Պօղոս Աղամիրզեանի դագաղին պսակ դնելու փոխարէն 20 ռուբլի:

Միւս թերթերի խմբագրութեան մէջ վաճառված են 21 ր. պատկերներ՝ Պրիշիբ 1) Բաբա Բաբաջանեանին (4 ր. 50 կ.), 2) Մանուկ Մարգարեանին (4 ր. 50 կ.), Իննոկենտեվկա՝ Ստեփան Լուսաջանեանին (4 ր. 50 կ.), Գանձակ՝ Քոչար Քոչարեանին (4 ր. 50 կ.), Թիֆլիս՝ Անյայտին (3 ր.):

Տ. Նազարեան

ՈՒՂՂՈՒՄՆ

Վերջերս «Մշակի» մէջ տպվեց, որ Տրապիզոնում սպանվել է կոտորածի ժամանակ Մխիթարեան ուխտի միաբան հ. Ակինեանը: Մի քանի այլ թերթեր տպելով այդ լուրը, աւելացրել են կենսագրական տեղեկութիւններ: Այժմ մեզ հաղորդում են ստոյգ աղբիւրից, որ սպանվողն եղել է ոչ թէ հայ բանասէր Ակինեանը, «Հանդէս Ամսօրեայի» խմբագիրը, այլ հ. Կարապետ Տէր-Սահակեանը, որին թիւրքերը սպանել են տանջանքով, որովհետև չէ կամեցել յանձնել նրանց դպրոցի աշակերտներին: Իսկ դպրոցի տեսուչ հ. Ստեփան Սարեանը և հ. Թովմաս Օտարաշեանը ժողովրդի հետ թիւրքերը քշել տարել են Միջագետք:

ՍԱՄԱՐԻՆԻ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Սինօդական վերջին անցքերը այնպէս են ազդել Պետրօգրադի միտրոպոլիտ Վլադիմիրի վրայ, որ նա հիւանդացել է և այժմ բժիշկների խորհրդով մեկնում է Ղրիմ:

«Ран. Утро» հաղորդում է, որ Սամարինի հրաժարականը ուժեղ տպաւորութիւն է արել Մոսկվայում, առանձնապէս ազնուականների շրջանում:

Մոսկվացիները այսպիսի կարծիքներ են յայտնում Սամարինի հեռանալու մասին.

Կատկով ասում է. «Ընդհանուր կարծիք կայ Սամարինի մասին, թէ որտեղ Սամարինն է, այնտեղ լինում է պատիւ, կարգ և արդարութիւն»:

«Տրուտչեվ՝ «Սամարինի հեռանալը ցնցող տպաւորութիւն թողեց ազնուականութեան վրայ: Շչերբատովի միաժամանակ հեռացումը—դրանք բոլորը նշաններ են...»:

Ն. Ի. Աստրով. «Դժուար է բանաձևել մտքերը մամուլի համար ընդունված ձևով: Մենք գտնվում ենք յուզմունքի տպաւորութեան տակ»:

երբ որ կամենաք, կամ երբ որ կուզենաք, իշխանուհի...

— Ես չեմ ցանկանում երբէք պարտք ունենալ, կամ պարտքի տակ մնալ...

— Այդ պարագային ընդունեցէք ձեր ծառայից նուէր...

— Մենք նուէր չենք ընդունում. քաջերը ձեզ են բերում քրտինքով կամ արիւնի գնով իրանց ցանկացածները...

— Ընդունեցէք յիշատակ, մի յիշելիք ձեր գեղը, ձեր բոյրը, ձեր շարժումներն ու ձայնը պաշտող եգիպտացի բարեկամից: Վեր առէք, դրէք ձեր ականջներին, թողէք ես մէկ տեսնեմ ձեր պատկերն ու հայեացքը և հաճոյքով գինված սրտով հեռանամ ձեր օթևանից:

— Ես սխալվեցի, որ յափշտակվեցի ձեր գինդերով: Այժմ, ինչպէս նկատում եմ, դուք յանդգնում էք նոյն իսկ ինձ անպատւել... Միթէ ձեր երկրում օտարական հիւրերին այսպէս էք անարգում...

— Ներեցէք, փէրի, ներեցէք թշուառիս, քանի որ ուրիշ բառ չեմ գտնում ձեր արժանաւորութիւնները բովանդակող: Ես սոսկ երկրպագող եմ գեղեցկին ու չքնաղին, որով մարմնացած, բազմած էք իմ դիմաց: Ես ոչ մի յանդուգն քայլ չեմ արել կեանքումս, և ձեր հմայքն ինձ այնպէս է կաշկանդել, որ ես չեմ կարող որևէ անհամեստ շարժում գործել: Ես անչափ գոհ կը հեռանայի այս յարկից, եթէ միայն հաճէիք իմ նուէրս ընդունել և ինձ թոյլ տալ ձեր ձեռքն համբուրել ու հեռանալ: Դրէք այդ օղերը ձեր ականջին և եթէ ցմահ գոհ չը մնաք, բաղդն անվախճան ձեզ չը խայտայ, անիծեցէք ինձ...

— Տարէք ձեր գինդերն ու հեռացէք. դուք արդէն շաղակրատում էք...

— Աղերսում եմ ձեզ, երկրպագելով, որ չը մերժէք դեռահասիս միակ խնդիրը:

— Լաւ, ես ընդունում եմ, միայն մի պայմանով, որ ինձ յայտնէք, թէ դուք ով էք, և թէ այս գինդերը...

— Ես Դամաղ-Բեամալ փաշայի՝ Եգիպտոսի նախկին կուսակալի թոռն եմ, իսկ գինդերը ժառանգութիւն եմ ստացել պապերիցս: Անունս Բեամալ է, բէյերի տոհմից:

— Քանի որ դուք իսկապէս իշխանական տոհմից էք, պարտաւորված եմ ձեր խնդիրը չը մերժելու, միայն մի ուրիշ պայմանով, որ դուք չը հետաքրքրվէք իմ ով լինելս իմանալու և այս շնորհից աւելին ցանկալու:

Ասաց և ձեռքը մեկնեց, որ բէյը համբուրեց և ցտեսութիւն ասելով հեռացաւ: Իշխանուհին գինդերն ականջից կախած մօտեցաւ հայելուն, զննեց դէմքը և զգաց, որ ինքը ոչ միայն անչափ թարմացել ու քնքշացել էր, այլ երբէք այդքան գեղահաս և չքնաղ չէր եղել: Այս պարագան այնպիսի հրճուանք պատճառեց, որ նա համոզվեց, թէ եգիպտացի բէյը նրան չէ խաբել, գինդերը թլիսմած էին:

Սակայն Բեամալ-բէյը «Լօնդօն» հիւրանոցից որքան հեռացաւ, այնքան մռայլվեց հոգով: Այդ գինդերին Թէվֆիկ-փաշան և անգլիացի լօրդեր քանի՛ քանի՛ անգամ տասնական-հազար լիրա և աւելի առաջարկել էին, նա չէր տուել, իսկ այս անգամ նա կորցրել էր, տուել էր մի այնպիսի կնոջ, որի դէմքն անգամ չէր կարողացել տեսնել: Բեամալ-բէյը իր ապարանքը հասնելուց յետոյ՝ աւելի տխրեց. իշխանուհին նրան քաշում էր դէպի «Լօնդօն» հիւրանոցը: Բայց ինչպէս երթար... դատարկ ձեռքով...

Նա ամբողջ երկու ամիս մի տասնեակ ընկերակիցների հետ հետամուտ էր իշխանուհուն, բայց ընկերակիցներից ոչ մէկը այն բաղդին չէր արժանացել, ինչ որ ինքը ձեռք էր բերել: Այս պարագան թէև մխիթարում էր Բեամալ-բէյին, բայց իշխանուհու տիպարը, բոյրը, ձայնը և շարժումները նրա հոգին ձգում էին դէպի «Լօնդօն» հիւրանոց: Սակայն ինչպէս, ինչ պատրուակով նա գնար այնտեղ. չէ որ իշխանուհին կարող էր վռնդել, անպատւել և դեռ անարգել դատարանով:

Բեամալ-բէյը յուզված, բորբոքված անցկացրեց ողջ օրն ու գիշերը, անվերջ մտածելով թէ ինչ կարող էր տանել հետևեալ օրն իշխանուհուն, որ կարողանար արժանանալ նրա ընդունարանը մտնելու, նախորդ օրվան հաճոյքը ստանալու: Մօր, մամի, քրոջ և հարսի բոլոր պահարանները քրքրելուց յետոյ, ձեռքն ընկաւ այն ոսկի օձը, զմրուխտով, փիրուզով և ադամանդով զարդարված, որն այնպէս էր փաթթվում կրողի թևին, որ հեռուից դիտողը կարծում էր, թէ օձը ուզում է խայթել և թունաւորել ապարանջանը կրողի զարկերակը: Այդ զարդը դրեց թևի տակ, մտաւ «Լօնդօն» հիւրանոց և իշխանուհու աչքերը գրաւելով իր պատմական հնագարեան զարդով՝ կըրկին մտաւ տիկնոջ ընդունարանը՝ ապարանջանը սակարկելու:

Բեամալ-բէյը այդ էլ տասը հազար ոսկի գնահատեց և ապա նուէր տուեց ու հեռացաւ միայն իշխանուհու ձեռքը համբուրելով:

Երրորդ օրը Բեամալ-բէյը տարաւ մօր ճակատի զարդը, օձի գլխով և բազէի թևերով ոսկուց հիւսված մի վարսակալ, որը նոյնպէս փարաւոնների գերեզմանների պեղումից գտել էին ֆէլլահները և նուէր բերել Բեամալ-փաշային, երբ նա XVIII դարում Եգիպտոսի վալին էր: Այդ էլ այնտեղ գնաց, ուր գլորվել էին նախկին երկու զարդերը: Իսկ դրանից յետոյ, Բեամալ-բէյը տանը էլ այնպիսի բան չը գտաւ, որ կարողանար իշխանուհու հետ 5—10 րոպէ խօսելու բարեբաղդութիւնը ձեռք բերել: Բայց իշխանուհու հրապոյրը նրան անվերջ ձգում էր դէպի «Լօնդօն» հիւրանոցը:

Երկար մտածելուց յետոյ, Բեամալ-բէյը գնաց Թէվֆիկ-փաշայի ապարանքը, ներկայացաւ խըդիվին, որի համակրութիւնն ու հովանաւորութիւնն էր վայելում, որպէս կրթված երիտասարդ և նախկին սուլթանական տան փեսայի սերունդ: Երբ երկար խօսակցութիւն բացվեց և չէր ուզում պալատից հեռանալ, զգաց խըդիվը, որ Բեամալ-բէյը հոգեկան վիշտ ունէր և չէր յանդըգնում իրան պարզելու: Որպէսզի մխիթարէ, քաջալերէ և յուսադրէ երիտասարդին, խըդիվը նրան հրաւիրեց իր այգին նախաճաշի, ուր նրան ստիպեց վիշտը խոստովանելու:

— Մեծափառ,—ասաց Բեամալ-բէյը,—դուք ինձ խոստացաք տալ այն ուլունքէ բաճկոնը, որը ես պեղեցի ու գտայ Լուքսորի փարաւոնական դամբարանում, քանի՛ քանի՛ անգամ առաջարկեցիք տանել, ես անուշադիր եղայ: Բայց այսօր ինձ պէտք է այդ կապոյտ ուլունքէ բաճկոնը: Ես անչափ շնորհակալ կը մնամ, եթէ հաճէք ինձ շնորհել վաղուցվայ խոստացածը:

— Այդ քոնն է, ոչ ոք իրաւունք չունի քեզանից յափշտակելու, բայց եթէ հաճես ինձ ծախել այդ բաճկոնը, քանի որ նմանը չը կայ եգիպտական մուզէյում, ոչ էլ Եւրոպայում, ես քեզ 20,000 լիրան կը տամ:

— Ձեզ փէշքէշ,—ասաց Բեամալ-բէյը,—ես փողով չեմ ծախում: Եթէ ես եկայ բաճկոնը պահանջելու, այդ չէ նշանակում, թէ եկայ փող ստանալու, կամ պիտի տանեմ, որ փողով ծախեմ, այլ մի այնպիսի կարիք կար, որ պէտք էր:

— Ես քեզ կը տամ Էլ-Զէզիր ագարակը, որ տարեկան 500 լիրա հասոյթ է տալիս: Վեր առ ագարակը և թող ինձ բաճկոնը:

— Ես ասացի, ձեզ փէշքէշ,—ասաց Բեամալը,—էլ այդ մասին խօսք մի անէք:

— Ագարակն էլ քեզ փէշքէշ: Այսօր կը հրամայեմ, որ կալուածագիրը գրեն քո անունով:

— Հաճեցէք նուէր ընդունելու, առանց տրիտուրի:

— Ո՛չ, դու որքան էլ որ հարուստ ես, բայց և այնպէս Էլ-Զէզիրը կարող է քեզ պէտք գալ:

Նախաճաշից յետոյ, երբ խըդիվը նկատեց, որ Բեամալ մռայլ հեռացաւ ապարանքից, կանչեց իր մօտ Ուչարիին և ասաց.

— Ուչարի, վեր առ այս ուլունքէ բաճկոնը և այս կալուածագիրը, տար յանձնիր Բեամալ-բէյին: Ասա, որ ես ուզում էի փորձել նրա հոգին, և շատ ուրախ եմ, որ նա ինձ ոչինչ չը խնայեց: Ասա, որ ես կարիք չունեմ բաճկոնին: Ապա գաղտնի պէտի հետամտես այդ երիտասարդին, որ իմանաս, թէ նա ում է տալու այդ բաճկոնը: Ես չեմ ցանկանում բաճկոնը կորցնել, հասկացա՞ր: Ապա կը գնեմ քառապատիկը վճարելով:

Ուչարին կատարեց Եգիպտոսի հրամանակալի պատուէրը և հետևեալ օրը տեսաւ, թէ ինչպէս Բեամալ-բէյը Կահիրէի հնավաճառների տարազով մտաւ «Լօնդօն» հիւրանոցը: Ուչարին, որ նոյնպէս ծպտած էր գլխարկավաճառի տարազով, մտաւ «Լօնդօն» հիւրանոցը և իր այլանդակ խոշոր ֆէսերը՝ կապոյտ մետաքսի փնջերով՝ շարեց սեղանի վրայ, ինքն էլ այնպիսի մութ տեղ կանգնեց, որ իրան չը կարողացան լաւ զննել:

Ատրպետ

Կոմս Օլսուֆիվ. «Հոգով ցաւում եմ Սամարինի հեռանալու մասին: Բոլոր ազնւականների վրա՝ աջակողմեան թէ ձախակողմեան, այդ հեռացումը ծանր տպաւորութիւն թողեց»:

Շչեպկին. «Սամարինի հեռացումը նշան է, որ կառավարութիւնը տարաձայնվում է ազնւական շրջանների հետ»:

Նարոժնիցէ. «Եթէ Սամարինն էլ ընդդիմադիր է, ուրեմն դրութիւնը ողբերգական է»:

Ն. Ի. Գուչկով. «Ես երկիւղ եմ կրում, որ եկեղեցում տիրէ Սաբլէրեան նախկին կարգը, որն անհանդուրժելի էր ամեն տեսակէտներով»:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ընթացիկ կեանքը Էջմիածնում

Վաղարշապատ, 29 սեպտեմբերի

Այս տարի Վեհ. Հայրապետը բարեհաճել էր իր տօնը շատ անշուք կերպով կատարել: Ուրբաթ օրը երեկոյեան առանց Թափօրի եկեղեցի իջաւ. իսկ շաբաթ օրը պատարագին կատարվեց Հայրապետական մաղթանք, որին ինքը ևս ներկայ էր: Եկեղեցում ընդունեց թէ հոգևորականների և թէ աշխարհականների շնորհաւորանքները: Յետոյ Թափօրին գլուխ անցած հոգեհանգիստ կատարեց երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթողիկոսի գերեզմանի վրա: Այդ օրը վեհարան կանչեց Վաղարշապատի նոր գործակալ Վ. Ք. Աղազադեանին, նրա 10 ամսվայ ընթացքում գաղթականական գործում ցոյց տուած գործունէութեան համար պարգևատրեց լանջախաչ կրելու իրաւունքով:

Այժմ գաղթականները մեզանում մնացել են 5—6000. Տարափոխիկ հիւանդութիւնները համարեա վերջացել են: Հիւանդանոցները պակասցնում են՝ հիւանդներ չը լինելու պատճառով: Թղթակից

Թանգութիւն եւ անմաքրութիւն

Շուշի, 20 սեպտեմբերի

Այս քանի օր է՝ մեր քաղաքում նաւթ չը կայ. եղածն էլ փութը ծախվում է 25 կոպէկով: Թանգ են նաև միւս մթերքները. ալիւրը վերջին տեսակը ծախվում է տոպրակը 15 ռուբլով. երբեմն քաղաքում թըխած հաց չէ ճարվում. տեղիս սովորական հացի գինը 6½ կոպէկ է, շաքարը 23 կ., ածուխը ծախվում է 1 ռ., որ առաջ արժէր 50 կ., նոյնպէս թանգ են թէյը, սուրճը և ուրիշ անհրաժեշտ ապրանքները:

Բացի թանգութիւնից, քաղաքում տիրում է անմաքրութիւն: Դեռ մայիս և յունիս ամիսներին եղած անձրևների բերած աւազն և քարերը մինչև հիմա էլ թափված են փողոցներում, որի պատճառով էլ քաղաքի առանց այն էլ նեղ փողոցներում անց ու դարձը խիստ դժուարացել է:

Բանւոր Դարբինեան

Մեր կանանց զբաղմունքը

Վերին-Ագուլիս, 17 սեպտեմբերի

Աւանիս թէ բարձր և թէ ցածր դասակարգի կանայք սովորութիւն են արել և ամեն օր, հաւաքվելով միմեանց տուն, խաղում են զանազան տեսակի թղթախաղեր, ինչպէս օրինակ կարող եմ թւել «փրապը», «լոտոն», «տիփարկը» և այլն: Պատահում է, որ նրանք մինչև ուշ գիշեր տարվում են խաղով, երբ միայն ամուսինները տուն են տանում նրանց: Աւելի տարածված խաղերը «փրապը» և «լոտոն» են, որոնցից առաջինը խաղում է բարձր դասակարգը, իսկ երկրորդը ցածր:

Այսպիսի օրերին, երբ մեզ շրջապատել են ամեն տեսակ աղէտներ, մեր կանայք իրանց տուել են այսպիսի զուարճութեան, որ ամօթաբեր է մի հասարակութեան համար: Եկաս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Այսօր մեշչանների վարչութեան շէնքում նշանակված է մեշչան լիազօրների նիստը, ուր, ի միջի այլոց, քննվելու է մուսուլմանների վրա տուրք դնելու հարցը զինւորական ծառայութիւն չը կատարելու փոխարէն:

◆ Հոկտ. 5-ին, ոստիկանապետի դիւանատանը տեղի ունեցաւ ոստիկանութեան տօնակատարութիւնը, որին ներկայ էին նահանգապետ Ստրախովսկին և ուրիշ շատ պաշտօնական անձինք: Այդ օրվայ առիթով ոստիկանապետը մի գրութեամբ շնորհաւորում է իր ստորադրեալներին և ներում նրանց բոլոր մեղանչումները:

◆ Հայոց դրամատիկական Ընկ. այս տարվայ նոյեմբերին մրցանակաբաշխութիւն է նշանակել երեք լաւագոյն՝ ինքնուրոյն և թարգմանական պիէսների համար: Տիկ. Մ. Մակարեանի անուան մրցանակը՝ 150 ռ.՝ տրվելու է լաւագոյն ինքնուրոյն պիէսին: Երկրորդ յոբելեանական (ի յիշատակ հայ թատրոնի 50-ամեայ գոյութեան) մրցանակը՝ 100 ռ. տրվելու է թարգմանական լաւագոյն պիէսին. իսկ երրորդ՝ Մ. Մելիք-Այվազեանի անուան՝ ամենալաւ ինքնուրոյն պիէսին, որ ոչ մի տեղ չէ խաղացված: Պիէսները ընդունվելու են միայն մինչև նոյեմբերի 20-ը:

◆ Ստանիսլաւի 3-դ աստիճանի շքանշաններ են ստացել հետեւեալ հայ օֆիցերները. պոդպորուչիկ Յակոբ Զատիկեան, պրապորշչիկներ՝ Յովհաննէս Յարութիւնեան և Գէորգ Օհանջանեան, իսկ դնդապետ Մելիք-Մուրադեան արժանացել է ս. Աննայի 2-դ աստիճանի շքանշանի:

◆ Ժողովրդական համալսարանի ընկ. անդամների արտակարգ ժողովը, որ նշանակված է հոկտ. 4-ին, անդամների կանոնաւոր թիւ չը լինելու պատճառով չը կայացաւ:

◆ Հոկտ. 9-ին կը կայանայ վիրաւորների մասին եղած գործադիր յանձնաժողովի նիստը քաղ. ինքնավարութեան շէնքում, ուր, ի միջի այլոց, կը կարդացվի զեկուցում վրաց «Թանամեդրովէ ազրի» թերթի մի յօդուածի առիթով № 37 լազարէթում կատարված քննութեան հետեւանքների մասին: Ինչպէս յայտնի է, յիշեալ թերթը ակնարկներ էր արել, որ այդ լազարէթում անկարգ գործեր են կատարվում և զեղծումներ են եղել:

◆ Կառապանների յանձնաժողովը հոկտ. 3-ի իր նիստում որոշեց կառքերի երթեւեկութեան սակագինը բարձրացնել 40-ից 50 կոպէկի, մի երթը 90 կ.—1 ռուբ. կայարանից 75 կ., փոխարէն 90 կ-, իսկ քաղաքից կայարան՝ 60 կոպէկ:

◆ Անցեալ օրը բանաստեղծ Կ. Բալմոնտ մեկնեց Քութայիս, ուր նա, Թիֆլիսում կազմած երեկոյթի օրինակով, սարքելու է երեկոյթ վրաց բանաստեղծ Շօթա Ռուսթավելիին նուիրված:

ԿՈՎԿԱՍ

◆ Բագուի քաղաքապետը հրաման է արձակել, որի մէջ ասում է, թէ 3 ամսով բանտ կը նստեցվեն այն առեւտրականները, որոնք, հակառակ պարտադիր որոշումների, ապրանքների և մթերքների գները կը բարձրացնեն 20%-ով:

◆ Բագուի հայկական կոմիտէը այս հոկտ. 10-ին, 11-ին և 12-ին հանգանակութիւն է կազմակերպում Բագուի մէջ և նրա արուարձաններում՝ փախստականների համար հագուստեղէն հաւաքելու:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պետրոգրադից հեռագրում են, որ նոր յոբելեանական մարկաների պատճառով առեղծված անյարմարութիւնները նկատի առած, նախագծված է վերացնել գործածութիւնից և նրանց փոխարինել ուրիշ դրամական նշաններով:

◆ «Н. В.»-ն հաղորդում է, որ Պետական Դումայի օրվայ հարցը վճռվելու է հոկտեմբերի վերջին:

◆ «Н. В.»-ն յայտնում է, որ առաջադիմականների կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նիստում հաւանութիւն է գտել Ֆրակցիայի գործունէութիւնը և մատնանշվել է, որ ֆրակցիան պէտք է կանգնէ պարլամենտական հողի վրա և պէտք է աշխատէ առաջադէմ բլոկի կազմի մէջ:

◆ «П. К.»-ը յայտնում է, որ Ռոստովի վրայով Կովկասեան զօրքն է մեկնել իբրև կամաւոր Իտալիայից եկած յայտնի երգիչ արտիստ Արմենակ Ահարոնեանը, որ իր երաժշտական կրթութիւնը ստացել է Միլանում:

◆ Բուրցեւին թոյլ չը տրվեց գալ Մոսկվա անձնական գործերով:

◆ Հոկտ. 4-ին Պետրոգրադում բացվեց հողային բանկերի ներկայացուցիչների համագումարը, որին մամուլի ներկայացուցիչները ներկայ չէին: Նախագահում է յայտնի տնտեսագէտ պրոֆ. Կաուֆմանը:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Շաբաթ, հոկտ. 3-ին, Հասարակական ակումբում տեղի ունեցաւ զրոյցը պատերազմի և ներքին կեանքի շուրջը շարունակութիւնն էր նախորդ շաբաթվայ բանախօսութեան, որի մասին գրվեց «Մշակի» № 213-ում: Առաջինը խօսեց Բենիամինովը, որ քաղուածքներ անելով «Русское Богатство» ամսագրից ցոյց տուեց, որ ռուս դեմոկրատիայի մի որոշ հատուածը համամիտ չէր կադէտական մտածելակերպին և անհրաժեշտ էր համարում փոխել կառքի ձիերը, եթէ ուզում էք, որ կառքը կէս ճանապարհին կանգ չառնէ: Ճառախօսը «Р. Вѣд.» թերթից վերցրած աւտոմոբիլի օրինակով ցոյց է տալիս կադէտների և ձախակողմեանների հայեացքների տարբերութիւնը ներկայ դրութեան վերաբերմամբ:

Ճառախօսը կանգնած էր այն տեսակէտի վրա, որ պէտք է փոխել շօֆէօրին, թէկուզ դրա համար հարկ լինի մի փոքր կանգնեցնել կառքի ընթացքը:

Երկրորդ խօսողը՝ Մ. Բերբերեանը պաշտպանեց կադէտական գործունէութիւնը և դրան վերագրեց այն խոշոր աշխատանքը, որով միայն հնարաւոր եղաւ արգելք դնել համառուսական անկազմակերպութեանը, որի յուսով էին թեւաւորված գերմանացիները. կադէտները, ըմբռնելով իրերի դրութիւնը և Գերմանիայի միտումները՝ խռովութիւններ առաջացնել Ֆինլանդիայում, Լեհաստանում, կովկասեան ազգութիւնների միջև—օգտագործելու նրանց՝ շփոթ դրութիւն առաջացնելով—առաջ կը տանեն իրանց նպատակները. կադէտների մեծագոյն ծառայութիւնն այն է, որ նրանք ազատեցին երկիրը ներքին հրդեհից: Ճառախօսը մեծ նշանակութիւն է տալիս պրոգրեսիվ բլոկին, որի վերաբերմամբ զեկուցանող Հէպշտէյնը հեգնանքով խօսեց և պատմութեան համար մի «աւելորդ թղթի կտոր» անուանեց (Բեթման-Հօլվէգի վերջին ճառից): Բլոկը ինքնին ապացոյց է միութեան և համերաշխութեան գալուն, որ ստեղծվեց կադէտների ջանքերով:

Պրոֆ. Դուբրովսկին, որ նոյնպէս խօսեց ի պաշտպանութիւն կադէտների, երկար և մանրամասն քննեց զեկուցանողի հիմնական թէզիսները. ճառախօսը մեծ նշանակութիւն է տալիս «հայրենիքի գաղափարին», որ համախմբել է բոլորին. այդ գաղափարը մեծ յաղթութիւններ է տարել Գերմանիայում, Ֆրանսիայում և Անգլիայում: Երբ Պուրիշկեվիչը ձեռք է մեկնել Միլիւկովին, դրանով յաղթանակել է «հայրենիքի գաղափարը», որի պաշտպանութեան համար միացել են բոլորը՝ վանելու սպառնալիքը:

Ընդմիջումից յետոյ խօսում է Հէպշտէյնը, որ պատասխանելով իր առարկողներին՝ վարպետօրէն ջրում է նրանց նկատողութիւնները: Նրա և Դուբրովսկու միջև վէճը ստանում է անձնական բնոյթ, բայց վերջում Սեմէօնովի ճառից յետոյ զեկուցանողը համաձայնվում է մի քանի կէտերում:

Զրոյցը վերջանում է գիշերվայ ժամը 12½-ին.

Գ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայոց թատրոն

Երկուշաբթի, հոկտեմբերի 5-ին, հայ դրամատիկական ընկերակցութիւնը բեմ հանեց Միքայէլ Մանուէլեանի «Շեղվածներ», «Հեքեաթ» և «Հրաբուխ» պիէսները: Առաջին երկուսը մի քանի անգամ ներկայացված են մեր բեմի վրա, ուստի և հասարակութեան ուշադրութիւնը կենտրոնացած էր գլխաւորապէս «Հրաբուխի» վրա, մանաւանդ որ, ինչպէս յայտնի է, այդ պիէսը անցեալ տարի մրցանակի էր արժանացել Դրամատիկ Ընկերութեան ժիւրիից:

Կարծիքները պիէսի մասին (որքան, ի հարկէ, մենք հնարաւորութիւն ունեցանք գիտելու) չափազանց տարբեր են և գլխաւորապէս աննպաստ՝ հեղինակի համար:

Մեզանից անկախ պատճառներով ստիպված ենք մեր հերթական րեցենզիան յետաձգել մինչև վաղը:

Այսքանը ասենք միայն, որ Մանուէլեանի նոր պիէսը մի նոր և հետաքրքրական երեւոյթ է մեր դրամատուրգիայի մէջ և եթէ մեծամասնութիւնը չէ հաւանել պիէսը—դա արդիւնք է այն բանի, որ մեր հնամաշ դրամատուրգիայով սնված հասարակութեան միանգամայն խորթ են թատերագրական նոր ձևերն և պրեօմները:

Լ. Ք.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՎԱՆԻ ՆԱԽՈՐԴ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ պ. Արամ Մանուկեանին

Թիֆլիս, 1 հոկտ.

Վասպուրականի յուլիսեան նահանջի ամենավերջին մեկնողներէն մէկը ըլլալով, և ոստիկանական պաշտօնիս հանգամանքով կարելի եղաւ ինձ տեսնել, թէ ինչպէս Վանի թէ Այգեստանի և թէ Քաղաքամէջի 13 եկեղեցիներէն հին մագաղաթեայ գրչագիր մատեաններ, ոսկեայ և արծաթեայ խաչեր և եկեղեցական զանազան սպասներ հաւաքեցին ձեր նշանակած և յանձնարարած մարդիկ: Քաղաքամէջի եկեղեցիները խուզարկելիս, դուք ևս անձամբ ներկայ էիք և կը թելադրէիք այսպէս ու այնպէս ընել, մի մասն ալ փոխադրելու դժուարութեան հանգամանքով՝ եկեղեցւոյ հայաթը այրել տուիք:

Իսկ ինչ կը վերաբերի Աղթամարի աթոռին և իր վիճակի վանքերուն, կղզի, անապատներուն, Վարագայ և միւս վանքերուն, որքան որ ատոնց ուղղակի պատասխանատու վանահայր ու պաշտօնէութիւններ կան, սակայն նոյնպէս և ատոնց մասին դուք հոգածու գտնուած էք, և ձեր հրահանգով ու մարդկանցով վերցնելու հոգն ունեցած էք:

Այսօր, որ արտագաղթի պատճառով շատերը կը մահանան, մեծ մասով ժողովուրդը ցիրուցան է և գուցէ այս դրութիւնը երկար տևէ, ես, իբրև վանեցի և ծուխ այդ եկեղեցիներուն, կուզեմ հասկնալ և կը յուսամ, որ ամեն մէկ վանեցիի փափագն է գիտնալ, թէ ինչ եղան այդ թանկագին և նուիրական մասունքները. Միայն մասնակի անհատներու կամ խմբակցութեանց ձե՞ռքը թէ, ինչպէս որ կարգն էր, յանձնուեցան Վեհ. Հայրապետին ի պահ, Էջմիածնում, մինչև երկրում բնակչութեան վերահաստատուիլը:

Յուսով եմ, որ դուք այս մասին նոյնպէս հրապարակով բացատրութիւն կուտաք:

Քաղաքամէջի ոստիկանական պաշտօնեայ՝

Տիգրան Հ. Գ. Կաքաւեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ ԲԱԼԱԽԱՆԻ, Վանի Գաւաշ գաւառի Փախնըր գիւղացի Ազիզ Նահապետեանին.—Ձեր մանրամասն հասցէն ուղարկեցէք մեզ, որովհետև խմբագրութեանս մէջ ստացված է մի նամակ՝ ձեզ հասցնելու խնդրանքով:

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳԻՐ.

Վանի նահանջի ժամանակ գաղթած Տիգրան Դաւթեանը (շատախեցի) սրանով դիմում է Ամերիկայի Բոստոն քաղաքում ապրող հայրենակիցներին և խնդրում, որ իր եղբօրը՝ Աւետիս Դաւթեանին յայտնեն, թէ ինքը՝ Տիգրանը ողջ առողջ է, ներկայումս գտնվում է Թիֆլիսում և կամենում է ունենալ իր եղբօր՝ Աւետիսի հասցէն: Տիգրան Դաւթեանին հասցնելիք նամակը կարելի է ուղղել «Մշակի» խմբագրութեանը՝ յանձնելու ըստ պատկանելոյն: Աւետիս Դաւթեանի մասին սրանից դեռ մի տարի առաջ տեղեկութիւն կար. նա այն ժամանակ Բոստոնումն էր և աշխատում էր մի ճաշարանում:

Նպաստ. Ընկ. վարչութիւնը շնորհակալութեամբ ստացաւ պ. Վասակ Փիլիպոսեանից 3 թոփ սպիտակ միտկալ հայ փախստականների երեխաների համար:

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ.

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բօրժօմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բօրժօմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.:
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՑԵԱՆ—12—1 ժ. երեխ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-Բ. ԺԻՐԱԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.: [illegible] ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—165

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի: Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմենովսկայա փող., № 18 (Վորոնցովի արձանի մօտ): Բժշկի բնակարան. Սեմենովսկայա, № 16.
(Հ. ու. Կ.) 1018. 100—90

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՍԿԱԼԻ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ ԻՆՉՊԷՍ ԵՆ ՄԵՌՆՈՒՄ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ

Ջղային հիւանդները մեռնում են սրտի թուլութիւնից, ողնաշարի ուղեղի բորբոքումից, ուղեղի փափկանալուց, մասամբ խելագար դրութեան մէջ կամ ինքնասպանութեամբ յաճախ արբեցողութեան հետևանքներից, ալկոհոլիզմից, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ձգտում հիւանդի կողմից հոգին խեղդելու հիւանդութեան երեւան գալը: Ջղային հիւանդութիւնների նշանները ի միջի այլոց հետեւեալներն են. դիւրագրգռութիւն, վատ տրամադրութիւն, վերջաւորութիւնների դողդողումն, սրտի թրթռոց, գլխի պտոյտ, անքնութիւն, վերջաւորութիւնների ընդարմացում կամ կաշուի որոշ մասերի անզգայութիւն, կաշուի սուր զգայութիւն, կոկորդի, ձեռների և յօդերի ցաւեր, կրծքի ճնշումն, յիշողութեան թուլութիւն, ականջների աղմուկ, տարօրինակ ցանկութիւններ և այլն: Աւելի ծանր դէպքերում պատահում են մտաւոր կեանքի խանգարումները: Ջղային հիւանդութիւնները գլխի և ողնաշարի ուղեղային հիւանդութիւններ են: Անչափ աշխատանքի, վշտի հոգսի, վախի կամ ընդհանրապէս առողջապահութեան կանոնները խանգարելու պատճառով ջղային սիստէմը թուլանում է: Յաճախ այդ թուլութիւնը ժառանգական բնոյթ է կրում: Ուժասպառութեան այդ դրութիւնները պէտք է վերացնել սիստեմատիկ կերպով ամրացնելով ջղային սիստեմը, մատակարարելով օրգանիզմին այն սննդատու նիւթը, որը անհրաժեշտ կը համարվի ջղերի համար.

Իսկ դա ֆոսֆորն է, որ տարիների ընթացքում աստիճանաբար պակասում է մեզանից, ուրեմն հարկաւոր է այդ պակասը լրացնել:

Պարիզի յայտնի բժիշկ Գիլզին երկար աշխատանքից և փորձերից յետոյ յաջողվել է պատրաստել միակ դեղը, որը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ ֆօսֆօր. այդ դեղը կոչվում է Ստիմուլոլ, որը վերականգնում է կորցրած երիտասարդութիւնը, առողջութիւնը և ընդհանուր ջղայնութիւնը և թուլութիւնը. արտասահմանի և Ռուսաստանի յայտնի պրոֆեսօրները, բժիշկները և հիւանդները տուել են իրանց գովասանքը և շնորհակալութիւնը և այժմ զանազան սանատօրիաներում և հիւանդանոցներում բժշկում են հիւանդներին Պարիզի յայտնի բժիշկ Գիլզի հանճարեղ դեղով՝ Ստիմուլոլով... Ահա ինչ են գրում Ստիմուլոլի բժշկութեան մասին բժիշկները.

Իմ պրակտիկայի միջոցին «Ստիմուլոլով» բժշկումն անխտիր բոլոր դէպքերում տուել է փայլուն արդիւնք: Անհամար քայքայումների Ստիմուլոլի օգնութեամբ կլինիքական բժշկման կատարած մեր դէպքերը տասնեակներից աւելի են, չը հաշւելով հիւանդանոց այցելող հիւանդներին:

Մեր դիտողութիւններով միշտ պատրաստ ենք Ձեզ ծառայելու:

«Ջղային ու ներքին հիւանդութիւնների կլինիկա»՝ Բժ. Ժակ Լերու-Սինօ:

Իսկական Ստիմուլոլը պատրաստվում է Ֆրանսիայում (Պարիզում), ամեն մի տուփը ունի գործարանի դրոշմը՝ Institut „D-r Calvet Paris". մի տուփը բաւական է, որ դուք զգաք նրա հրաշալի գործողութիւնը եւ դուք կը ստանաք ձեր ուզած եռանդը եւ առողջութիւնը. դեղերի հետ ուղարկվում է բոլոր եւրոպական և Ռուսաստանի պրոֆեսորների, բժիշկների, հիւանդների գովասանքները և շնորհակալական նամակները:

Պատուէրները, փողը և նամակները ուղարկել 1) Тифлисское отдѣленіе Института доктора Кальве, Тифлисъ, Эриванск. площ., Пушкинская 3, верхній этажъ, отд. 1|1 (Խնդրեմ հասցէն գրել լրիւ, ինչպէս որ ռուսերէն գրված է): Մէկ տուփը արժէ 7 ռուբ., ճանապարհածախսով և վերադիր վճարով 50 կոպ. աւելի արժէ: Ով ուղարկի 7 ռ. փողը առաջուց լրիվին, ճանապարհածախս չի վճարում:

Վերադիր վճարով ուղարկվում է միայն 2 ռ. 50 կ. անխափան ստանալուց յետոյ:

Կ (Հ.) 609. 10—4

Ծարսկիէ-Կօլօդցի համար հարկաւոր է
ՏԻՐԱՑՈՒ
Ռոճիկը տարեկան 120 ռուբլի, արդիւնքը մօտ 80 ռուբլի, ընդամենը մօտ 200 ռուբլի տարեկան և սենեակ: Դիմել՝ Царскіе-Колодцы (Тифл. губ.) Священнику Акопу Григорьянъ
708. 2—1

Լոյս տեսաւ
Բ. ԻՇԽԱՆԵԱՆ
„Աղէտի եւ տառապանքի աշխարհից“
(Այց Թիւրքահայ փախստականներին)
78 եր. գինը 40 կ.
Արդիւնքը յատկացվում է Տ. Նազարեանի ճաշարանի օգտին:
Գրքերի պահեստը Տ. Նազարեանի մօտ. դիմել նաև՝ «Գուտտենբերգ», Կենտրոնական և «Գիրք» գրախանութներին: Իսկ Բագւում „Сотрудникъ" (Сегаль) և „Посредникъ" գրավաճառներին: (օ. մ.) 692. 10—4

Նոր լոյս տեսաւ
Մ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ
Մեթոդական ժողովածու թուաբանական խնդիրների
II տարի 5-րդ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ.
Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառներին կամ Тифлисъ, Могнинскій пр. № 3. М. Самуэляну.
(օ. մ.) 699. 3—3

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՀԻՄՆ. Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
(Երկու սեռի համար)
Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ., № 24.
Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր 10—12 ժ. առ., ժ. 5—7 երեկ.:
Պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 21-ից:
Տեղեկութիւններ տրվում և ուղարկվում են ձրի:
(Հ. ու. Տ.) 589. 0—17

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.